

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

2016
2016
2016
2016
2016
2016
2016
2016
2016
2016
2016
2016
2016

Ֆինանսական կայունության հաշվետվություն

2016

1-ին կիսամյակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2016
I կիսամյակ

2016

«Ֆինանսական կայունության հաշվետվությունում» ներկայացված են Հայաստանի ֆինանսական համակարգի կայունությանը սպառնացող հավանական ռիսկերի գնահատումը և ֆինանսական համակարգի՝ այդ ռիսկերը չեզոքացնելու կարողությունը:
Հաշվետվությունում ներառված ՀՀ մակրոտնտեսական միջավայրի և ֆինանսական համակարգի վերլուծությունների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը հրապարակվում է «Դրամավարկային քաղաքականության ծրագրի կատարման հաշվետվություն», «ՀՀ ֆինանսական համակարգը. զարգացումը, կարգավորումը, վերահսկողությունը» պարբերականներում:

Հաշվետվությունում օգտագործված են 30.09.2016 թ. դրությամբ առկա ցուցանիշները:

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
Երևան 0010, Վազգեն Սարգսյան 6
Հեռախոս՝ (374 10) 58 38 41
Ֆաքս՝ (374 10) 52 38 52
Ինտերնետային կայք՝ www.cba.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան 5

1. Համաշխարհային տնտեսության զարգացումները 8

1.1. Մակրոտնտեսական միջավայր 8

1.2. Միջազգային ֆինանսական շուկաներ 14

2. Հայաստանի մակրոտնտեսական միջավայրը 17

2.1. Մակրոտնտեսական զարգացումներ 17

2.2. Արտաքին առևտուր 19

2.3. Տնային տնտեսությունների եկամուտներ և պարտքի բեռ 20

2.4. Անշարժ գույքի գներ 24

3. Ֆինանսական շուկաների կայունությունը 27

3.1. Դրամական և կապիտալի շուկաներ 27

3.2. Արժութային շուկա 30

4. Ֆինանսական հաստատությունների կայունությունը 31

4.1. Առևտրային բանկեր 31

4.1.1. Ֆինանսական միջնորդություն, կենտրոնացվածություն 32

4.1.2. Վարկային ռիսկ 33

4.1.3. Իրացվելիության ռիսկ 35

4.1.4. Շուկայական ռիսկ 37

4.1.5. Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն 39

4.2. Վարկային կազմակերպություններ 41

4.3. Ապահովագրական ընկերություններ. 42

4.4. Պարտադիր կենսաթոշակային ֆոնդեր 45

4.5. Արժեթղթերի շուկայի մասնակիցներ 46

5. Ֆինանսական ենթակառուցվածքների կայունությունը 48

5.1. Միջբանկային վճարումներ ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգով 48

5.2. Վարկային ռեգիստր և ԱՔՌԱ վարկային բյուրո 51

5.3. Ավանդների երաշխավորում 52

Գծապատկերներ 54

Աղյուսակներ 57

Տերմինների բառարան 58

Օգտագործված հապավումներ 60

Ֆինանսական կայունությունը կարելի է բնորոշել որպես ֆինանսական, մակրոտնտեսական պայմանների այնպիսի համադրություն, որի դեպքում ֆինանսական համակարգը՝ ֆինանսական հաստատությունները, շուկաները և շուկայի ենթակառուցվածքները միասին ունակ են դիմակայելու հավանական ցնցումներին ու անհավասարակշռություններին՝ այդ կերպ նվազեցնելով ֆինանսական միջնորդության գործառույթների ընդհատման հավանականությունը:

Ֆինանսական կայունությունը սահմանելիս հաշվի է առնվում այն հանգամանքը, որ ֆինանսական անկայունություն կարող է առաջանալ ինչպես ֆինանսական համակարգի ներքին գործընթացների խաթարման, այնպես էլ երկրի ներսում ու համաշխարհային տնտեսությունում անբարենպաստ մակրոտնտեսական զարգացումների, խոշոր փոխառուների ու պարտատերերի հետ կապված խնդիրների, տնտեսական քաղաքականության կամ ենթակառուցվածքների փոփոխությունների հետևանքով:

Ֆինանսական կայունության ապահովումը ենթադրում է ռիսկերի հիմնական աղբյուրների, ֆինանսական ռիսկերի ոչ ճիշտ կառավարման, ակտիվների գների ձևավորման անարդյունավետության բացահայտում և համապատասխան քաղաքականության իրականացում:

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կենտրոնական բանկի ***Ֆինանսական կայունության հաշվետվությունը*** հրապարակվում է կիսամյակային պարբերականությամբ և ներկայացնում է ֆինանսական համակարգի կայունության վրա ազդող հիմնական ռիսկերի, ինչպես նաև ֆինանսական համակարգի՝ այդ ռիսկերին դիմակայելու ունակության ընդհանուր գնահատականը: Ֆինանսական կայունության վերլուծությունների վերաբերյալ տեղեկատվության հրապարակման միջոցով Կենտրոնական բանկը նպատակ ունի շահագրգիռ կողմերի ուշադրությունը հրավիրելու այն ռիսկերի, իրադարձությունների վրա, որոնք կարող են վտանգել ՀՀ ֆինանսական կայունությունը, ինչպես նաև նախաձեռնելու այդ ռիսկերի կառավարման, նվազեցման վերաբերյալ քննարկումներ:

ՀՀ կենտրոնական բանկի խնդիրներից է ֆինանսական համակարգի կայունության ու բնականոն գործունեության ապահովումը, որը փոխկապակցված է Կենտրոնական բանկի՝ գների կայունության ապահովման խնդրի հետ: Ֆինանսական համակարգի անկայուն վիճակը կարող է խոչընդոտել դրամավարկային քաղաքականության իրականացմանը և արդյունավետությանը, երկարաժամկետ և կայուն տնտեսական աճի ապահովմանը: Միևնույն ժամանակ, դրամավարկային և մակրոտնտեսական կայունությունը նպաստում է ֆինանսական կայունությանը սպառնացող ռիսկերի նվազեցմանը: Ֆինանսական համակարգը կարևոր դեր է խաղում ընդհանուր տնտեսական համակարգում, և անհրաժեշտ է, որ ֆինանսական համակարգը պահպանի գործընթացների անընդհատությունը և կայունությունը՝ այդպիսով նպաստելով ընդհանուր տնտեսության բնականոն աճին:

Ֆինանսական կայունությունը վտանգող փոփոխությունների և տատանումների վաղաժամկետ բացահայտման համար ՀՀ կենտրոնական բանկը իրականացնում է ֆինանսական կայունության շարունակական մշտադիտարկում (մոնիթորինգ), վերլուծություն: Հաշվետվությունում ներկայացված են մակրոմիջավայրում և ֆինանսական համակարգում դրսևորված ռիսկերը, դրանց ազդեցությունը տնտեսության ու ֆինանսական համակարգի տարբեր հատվածների զարգացումների վրա:

ՀՀ ֆինանսական կայունության վրա ազդող ռիսկերը կարող են ծագել ներքին տնտեսությունում, երկրից դուրս՝ արտաքին տնտեսությունում, և բուն ֆինանսական համակարգում: Այս առումով ֆինանսական կայունության ապահովման կարևորագույն նախապայմաններն են.

- համաշխարհային տնտեսությունում և միջազգային ֆինանսական շուկաներում բարենպաստ զարգացումները,
- կայուն ներքին մակրոտնտեսական միջավայրը՝ բավականաչափ վարկունակ տնային տնտեսություններով և ձեռնարկություններով,
- արդյունավետ գործող ֆինանսական համակարգը՝ խելամիտ ու կառավարելի սահմաններում գտնվող ռիսկերով,
- ֆինանսական համակարգի գործառույթների իրականացմանը նպաստող և անխափան գործող ֆինանսական ենթակառուցվածքները:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ ֆինանսական կայունությանը խոչընդոտող հավանական ռիսկերը հաշվետվությունում ներկայացված են 5 հիմնական ուղղություններով.

- համաշխարհային տնտեսության զարգացումներից ածանցվող ռիսկեր,

- ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումներից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումներից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական հաստատություններից ածանցվող ռիսկեր,
- ՀՀ ֆինանսական ենթակառույցներից ածանցվող ռիսկեր:

Հաշվետվությունում ներկայացված են այդ ոլորտներում դրսևորված ռիսկերը և դրանց հնարավոր ազդեցությունը տնտեսության և ֆինանսական համակարգի բոլոր հատվածների զարգացումների վրա: Ընդ որում՝ ֆինանսական կայունության հաշվետվությունում հիմնականում կարևորվում են բանկային համակարգի ռիսկերն ու զարգացման ուղղությունները, քանի որ ֆինանսական համակարգի ակտիվների գրեթե 90%-ը կազմում են առևտրային բանկերի ակտիվները, հետևաբար բանկային համակարգի իրավիճակով են պայմանավորվում ընդհանուր ֆինանսական կայունության մակարդակը և զարգացման ուղղությունները:

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

ՀՀ ֆինանսական համակարգը 2016 թ. առաջին կիսամյակում մի շարք ռիսկերի նյութականացումից վնասներ է կրել, չնայած հաջողվել է անցնել ցուցանիշների աճի փուլ:

ՀՀ ֆինանսական համակարգը 2016 թ. առաջին կիսամյակում կրել է նախորդ տարվա ռիսկերի նյութականացման հետևանքով առաջացած վնասները: ՀՀ կենտրոնական բանկի ձեռնարկած գործողությունների շնորհիվ հնարավոր է եղել ոչ միայն պահպանել ֆինանսական շուկաների կայունությունը, այլև որոշակի աճ արձանագրել վարկավորման ու ավանդների ներգրավման մասով:

Համաշխարհային տնտեսական աճի տեմպի ցածր մակարդակի շարունակական պահպանումը կարող է մեծացնել ռիսկերի հետագա նյութականացման հավանականությունը:

Միջազգային շուկաներում 2016 թ. առաջին կիսամյակում պահպանվել է գնանվոր մետաղների գների, Հայաստանի Հանրապետությունում ներքին սպառման, ինչպես նաև օտարերկրյա ներդրումների նվազումը: Աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված՝ Ռուսաստանի Դաշնությունում պահպանվել է տնտեսական անկումը, ինչն իր հերթին բացասաբար է ազդել Հայաստանի Հանրապետություն փոխանցվող մասնավոր տրանսֆերտների և ՌԴ արտահանվող ապրանքների ծավալների վրա:

Համաշխարհային տնտեսության աճի վերականգնումը, նախկինում տրված գնահատականների համեմատ, ավելի թույլ է եղել: Աշխարհաքաղաքական անհամաձայնությունները նպաստել են համաշխարհային առևտրի կրճատմանն ու մի շարք բորսայական ապրանքատեսակների գների նվազմանը:

Զարգացող և զարգացած երկրների դրամավարկային մարմինները պահպանել են տնտեսական աճի խթանմանը նպաստող ընդլայնողական դրամավարկային քաղաքականության ուղղությունը: Տարվա ընթացքում պահպանվել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքների ցածր մակարդակը: Տնտեսական աճի տեմպերի դանդաղմանը զուգընթաց, զարգացող երկրներում շարունակվել է կապիտալի արտահոսքը:

Հայաստանի Հանրապետության հիմնական առևտրային գործընկեր Եվրոմիության երկրներում և Ռուսաստանում տնտեսական զարգացումներն անբարենպաստ են եղել, և դրանց բա-

ցասական ազդեցությունը ներքին տնտեսության վրա դեռևս շոշափելի է (մանրամասն տե՛ս «Համաշխարհային տնտեսության զարգացումները» բաժնում և «Տնտեսական զարգացումները Ռուսաստանի Դաշնությունում» ներգիրում):

Դրամավարկային մարմինները շարունակել են իրականացնել տնտեսական աճի խթանմանն ուղղված ընդլայնողական դրամավարկային քաղաքականություն, տոկոսադրույքների բարձրացման հեռանկարը շարունակում է դիտարկվել ռիսկային համաշխարհային տնտեսության համար:

2016 թ. առաջին կիսամյակում ՀՀ տնտեսական աճը կազմել է 2.8% (2015 թ.՝ 3.0%), որը, ըստ էության, զգալի դանդաղել է առաջին եռամսյակում արձանագրված բավականին բարձր աճի համեմատ (4.4%): Աճին նպաստել է արդյունաբերության ճյուղում արձանագրված աճը, որը գերազանցել է կանխատեսված մակարդակը (մանրամասն տե՛ս «Հայաստանի մակրոտնտեսական միջավայրը» բաժնում): Չնավորված գնանկումային միջավայրի պայմաններում ՀՀ կենտրոնական բանկի կողմից զգալիորեն թուլացվել են դրամավարկային պայմանները, ինչը մեղմել է մասնավոր սպառման և մասնավոր ներդրումների նվազման ազդեցությունը ներքին պահանջարկի վրա:

Դիտարկվել է բանկային կապիտալի աճ, ինչը հավելյալ կլանիչ է հավանական ռիսկերի համար:

Տնտեսական աճի կայունության հետ կապված ռիսկերի պահպանման և համախառն իրական տնօրինվող եկամտի թույլ աճի պայմաններում բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները նվազել են: Միևնույն ժամանակ, առևտրային բանկերին հաջողվել է ընդլայնել վարկային ու ավանդային պորտֆելները, բարելավել կապիտալի համարժեքությունն ու իրացվելիությունը: Վերջիններիս մասնավորապես նպաստել են ԿԲ կողմից ընդհանուր կապիտալի նվազագույն սահմանաչափի բարձրացման պայմաններում բանկերի կողմից կանոնադրական կապիտալի համալրումները:

Ֆինանսական համակարգի ռիսկերի աճի միտումներ չեն դիտարկվել. դրանք շարունակում են մնալ կառավարելի շրջանակում՝ չառաջացնելով ֆինանսական կայունության ապահովման խնդիրներ (մանրամասն տե՛ս «Ֆինանսական հաստատությունների կայունությունը» և «Ֆինանսական ենթակառուցվածքների կայունությունը» բաժիններում):

1. ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ[1]

1.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Տնտեսական աճի հեռանկարներն ընդհանուր առմամբ թուլացել են ամբողջ աշխարհում: Զարգացող և անցումային տնտեսությամբ երկրների տնտեսությունները բախվել են մի շարք խոչընդոտների, ինչպիսիք են զարգացած երկրների ցածր տնտեսական աճը, հիմնական ապրանքատեսակների գների ցածր մակարդակի պահպանումը, ինչպես նաև համաշխարհային առևտրի դանդաղ վերականգնումն ու թույլ կապիտալ հոսքերը: Հումքային ապրանքատեսակներ արտահանող և ներմուծող երկրների տնտեսական բնութագրիչները զգալի տարբերվել են: Տնտեսական պայմանները շարունակում են խնդրահարույց մնալ հումքային ապրանքներ և/կամ նավթ արտահանող երկրներում, որտեղ միջոցառումներ են իրականացվում տնտեսության իրավիճակը ցածր գների միջավայրին համապատասխանեցնելու ուղղությամբ: Թեև հումքային ապրանքներ և/կամ նավթ ներկրող երկրները առավել բարենպաստ դիրքում են գտնվում, այնուամենայնիվ գների նվազման բացասական ազդեցությունը ապրանքներ և/կամ նավթ արտահանող երկրների տնտեսական զարգացումների վրա ավելի մեծ և շոշափելի է, քան դրա դրական ազդեցությունը ներմուծող երկրներում:

Կանխատեսվում է համաշխարհային տնտեսական աճի որոշակի արագացում առաջիկա տարիներին, այնուամենայնիվ նվազման ուղղությամբ ռիսկերը կպահպանվեն: Դրանց թվում ընդգծված են զարգացած երկրներում սպասվածից դանդաղ տնտեսական վերականգնման, զարգացող երկրներից կապիտալի արտահոսքի և դրանից բխող ֆինանսական շուկաների տատանողականության, Չինաստանի տնտեսության կառուցվածքային վերափոխման գործընթացից ածանցվող համաշխարհային պահանջարկի հավանական նվազման, զարգացող երկրներում և Ռուսաստանում տնտեսական հիմնախնդիրների և դանդաղ աճի շարունակման և ամբողջ աշխարհում աշխարհաքաղաքական անորոշություններից բխող ռիսկերը:

Կիսամյակի ընթացքում համաշխարհային թույլ տնտեսական աճը պահպանվել է, իսկ նվազման ուղղությամբ ռիսկերն առավել ընդգծված են եղել: Տարեսկզբի ֆինանսական և վառելիքաէներգետիկ ռեսուրսների շուկայում արձանագրված վերականգնումը պահպանվել է՝ որոշակի դրական ազդակներ հաղորդելով համաշխարհային տնտեսությանը:

Տարեսկզբին ուրվագծված մի շարք ռիսկեր կիսամյակի ընթացքում նյութականացվել են, մասնավորապես՝ մի շարք զարգացած երկրներում սպասվածից ցածր տնտեսական վերականգնումը, աճող քաղաքական անկայունությունները, իրականացվող դրամավարկային քաղաքականությունների ցածր արդյունավետությունը, քաղաքականություն մշակողների՝ խթանող հարկաբյուջետային քաղաքականություն կիրառելու դժկամությունը:

---

[1] Միջազգային զարգացումների և կանխատեսումների համար հիմք է ծառայել IMF, World bank, Economist Intelligence unit, Financial times, Bloomberg, RBC, The institute of international finance և այլ աղբյուրների տեղեկատվությունը:

2016 թ-ին համաշխարհային տնտեսությունում կպահպանվի դանդաղ աճի միտումը, ընդ որում՝ թե՛ զարգացած, թե՛ զարգացող երկրներում նախորդ տարվա համեմատ տնտեսական աճի տեմպերի էական փոփոխություն չի արձանագրվի:

ԱՄՀ գնահատումներով համաշխարհային տնտեսական աճը կկազմի 3.1% (2015 թ. տնտեսական աճը՝ 3.1%):

Կիսամյակի ընթացքում զարգացող և անցումային տնտեսությամբ երկրներում տնտեսական աճի տեմպի էական արագացում չի նկատվել, զարգացած երկրներում արձանագրվել է տնտեսական աճի շարունակական թույլ վերականգնում:

Զարգացած երկրներում 2016 թ. համար կանխատեսվում է նախորդ տարվա համեմատ 0.1 տոկոսային կետով ցածր տնտեսական աճ՝ 1.8%, իսկ զարգացող երկրներում՝ տնտեսական աճի տեմպերի աննշան արագացում մինչև 4.1%՝ նախորդ տարվա 4.0%-ի փոխարեն[2]:

Համաշխարհային տնտեսության ակտիվության ներկայիս մակարդակի և բորսայական ապրանքների շուկաներում առկա գնային զարգացումների պայմաններում պահպանվել է ցածր գնաճային միջավայր, որից ելնելով ԱՄՀ-ն 2016 թ. գնաճը զարգացած երկրներում կանխատեսում է 0.7%, իսկ զարգացող երկրներում՝ 4.6%: Ընդ որում՝ գալիք տարում ևս գնաճային ճնշումներ չեն ակնկալվում:

2015- 2016 թթ. համաշխարհային տնտեսական աճի գնահատման վերանայումները ԱՄՀ կողմից, %


Ցուցանիշ *(տնտեսական աճ)*	**31.10.14 թ. դրությամբ 2014 թ. կանխատեսում**	**31.01.15 թ. դրությամբ 2014 թ. գնահատում**	**31.01.15 թ. դրությամբ 2015 թ. կանխատեսում**	**30.04.15 թ. դրությամբ 2014 թ. գնահատում**	**30.04.15 թ. դրությամբ 2015 թ. կանխատեսում**	**31.07.15 թ. դրությամբ 2014 թ. գնահատում**	**31.07.15 թ. դրությամբ 2015 թ. կանխատեսում**	**31.10.15 թ. դրությամբ 2014 թ. գնահատում**	**31.10.15 թ. դրությամբ 2015 թ. կանխատեսում**	**15.04.16 թ. դրությամբ 2015 թ. գնահատական**	**16.07.16 դրությամբ 2016 թ. կանխատեսում**
Համաշխարհային տնտեսություն	3.3	3.3	3.5	3.4	3.5	3.4	3.3	3.4	3.1	3.1	3.1
Զարգացած երկրներ	1.8	1.8	2.4	1.8	2.4	1.8	2.1	1.8	2.0	1.9	1.8
ԱՄՆ	2.2	2.4	3.6	2.4	3.1	2.4	2.5	2.4	2.6	2.4	2.2
Եվրոգոտի	0.8	0.8	1.2	0.9	1.5	0.8	1.5	0.9	1.5	1.7	1.6
Զարգացող երկրներ	4.4	4.4	4.3	4.6	4.3	4.6	4.2	4.6	4.0	4.0	4.1
ԱՊՀ	0.8	0.9	-1.4	1.0	-2.6	1.0	-2.2	1.0	-2.7	-2.8	-0.6
Ռուսաստան	0.2	0.6	-3.0	0.6	-3.8	0.6	-3.4	0.6	-3.8	-3.7	-1.2
Չինաստան	7.4	7.4	6.8	7.4	6.8	7.4	6.8	7.3	6.8	6.9	6.6

Զարգացած երկրներում, կիսամյակի ընթացքում թույլ տնտեսական աճին զուգահեռ, ներդրումները գտնվել են ցածր մակարդակի վրա, գնաճը նպատակային թիրախից ցածր է եղել առավելապես ի հաշիվ հիմնական բորսայական ապրանքատեսակների ցածր գների:

Առաջին կիսամյակում ԱՄՆ տնտեսական աճը սպասվածից ցածր է եղել: Նավթի գների ցածր մակարդակը բացասական է անդրադարձել էներգետիկ հատվածի վրա, իսկ կայուն դոլարը

Նախորդ տարվա ընթացքում տնտեսական աճին խոչընդոտող ռիսկերը պահպանվել են նաև ընթացիկ կիսամյակում


Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների



* *Այս և հաջորդ գծապատկերներում աստղանիշով նշված ցուցանիշները ԱՄՀ գնահատումներն են (2016 թ. ապրիլ):*

Աղբյուրը՝ ԱՄՀ:

Գնաճը մի շարք երկրներում



Աղբյուրը՝ ԱՄՀ:

Կիսամյակի ընթացքում համաշխարհային տնտեսական աճի կանխատեսումը չի փոփոխվել:

[2] *ԱՄՀ բոլոր կանխատեսումներն ու գնահատումները վերցված են «World economic outlook update, July 2016» պարբերականից:*

ու զարգացող երկրների ցածր պահանջարկը նվազեցրել են արտահանման ծավալները: Միևնույն ժամանակ, իրական տնօրինվող եկամտի աճը աշխատաշուկայում դրական զարգացումների համատեքստում խթանել է մասնավոր սպառումը, որն էլ ունեցել է ամենամեծ նպաստումը տնտեսական աճին: Ըստ ամենայնի, ԱՄՆ տնտեսական աճի ներկայիս մակարդակը առաջիկա տարիներին կպահպանվի, ինչին առավելապես կնպաստեն տնային տնտեսությունների պարտքի բեռի նվազումը և եկամուտների աճը, սպասվող դրական զարգացումները աշխատաշուկայում, անշարժ գույքի շուկայի կայունացումը, ինչպես նաև խթանող հարկաբյուջետային քաղաքականությունը:

ԱՄՀ կանխատեսումների համաձայն՝ 2016 թվականին ԱՄՆ տնտեսությունում տնտեսական աճը կկազմի 2.2%՝ նախորդ տարվա 2.4%-ի փոխարեն:

Եվրոպական երկրներում 2016 թ. առաջին կիսամյակում արձանագրվել է տնտեսական աճի տեմպի որոշակի վերականգնում: Առաջին եռամսյակում տնտեսական աճը սպասվածից բարձր է եղել՝ գլխավորապես պայմանավորված ներքին բարձր պահանջարկով: Թեև հիմնարար ցուցանիշները կանխատեսում էին տնտեսական աճի հետագա բարելավում, այնուամենայնիվ հունիսին Մեծ Բրիտանիայի՝ Եվրոմիությունը լքելու որոշումը[3] էական անորոշություններ է առաջացրել Եվրոգոտու հետագա տնտեսական զարգացումների վերաբերյալ:

Տնտեսական աճի վերականգնմանը նպաստել են հումքային ապրանքատեսակների ցածր գները և ԵԿԲ կողմից աննախադեպ ծավալների դրամավարկային խթանման միջոցառումների արդյունքում վարկային շուկայում արձանագրված որոշակի աշխուժացումը: Տնտեսական աճին շարունակել են խոչընդոտել ներդրումային թույլ միջավայրը, թույլ արտաքին պահանջարկը, աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված մի շարք անորոշություններ:

Ակնկալվում է, որ Եվրոգոտու հետագա տնտեսական ակտիվությանը հիմնականում կնպաստեն ներքին պահանջարկի կայուն վերականգնումը, դրական զարգացումները աշխատաշուկայում, քանակական ընդլայնման ծրագիրը, ինչպես նաև նավթի գների ցածր մակարդակն ու մեղմ դրամավարկային պայմանները: Վերոնշյալ դրական գործոններին հակակշիռ կարող է հանդիսանալ ներդրումային թույլ միջավայրը՝ գլխավորապես պայմանավորված Եվրոգոտու հիմնական գործընկեր զարգացող երկրների ցածր տնտեսական աճով:

Եվրոգոտու 2016 թ. տնտեսական աճը ԱՄՀ կողմից գնահատվել է 1.6 %՝ նախորդ տարվա 1.7% աճի փոխարեն:

---

[3] 2016 թ. հունիսի 23-ին Մեծ Բրիտանիայում իրականացվեց Եվրոմիությունը լքելու կամ կազմում մնալու հանրաքվե, որի արդյունքում 52% կողմ ձայներով ընտրվեց Եվրոմիությունը լքելու տարբերակը: Հանրաքվեին անմիջապես հաջորդեցին կտրուկ տատանումներ ֆինանսական շուկաներում. արդյունքում Մեծ Բրիտանիայի ազգային արժույթը կտրուկ արժեզրկվեց և կորցրեց իր AAA վարկանիշը: Մեկ ամիս անց, այնուամենայնիվ, միջազգային ֆինանսական շուկաներում իրավիճակը հանդարտվեց, և հիմնական ինդեքսները վերադարձան մինչհանրաքվեական մակարդակին: Ընդհանուր առմամբ, Brexit-ը մեծացրել է տնտեսական անորոշություններն ամբողջ աշխարհում, և, համաձայն գնահատումների, նպաստումը բացասական կլինի ինչպես Եվրոմիության, այնպես էլ Մեծ Բրիտանիայի տնտեսական աճին:

Զարգացող երկրներում, որոնք ապահովում են համաշխարհային տնտեսական աճի գրեթե 70.0%-ը, 2016 թ. տնտեսական աճի տեմպը շարունակել է դանդաղել, և, ըստ ամենայնի, հետագայում ևս էական արագացում չի ակնկալվում:

Զարգացող երկրների տնտեսական աճի տեմպերի դանդաղման հիմնական պատճառներից են թույլ ներքին պահանջարկով և ներդրումային թույլ միջավայրով պայմանավորված տնտեսական դանդաղումը Չինաստանում, բորսայական ապրանքատեսակների ցածր գները և համեմատաբար խիստ ֆինանսական պայմանները (հատկապես Լատինական Ամերիկայում և նավթ արդյունահանող երկրներում), աշխարհաքաղաքական զարգացումներով պայմանավորված տնտեսական դժվարությունները (հատկապես ԱՊՀ-ի, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում): Տնտեսական աճի դանդաղումը զարգացող երկրներում կարճաժամկետում շարունակական կլինի՝ պայմանավորված արտահանվող ապրանքատեսակների ցածր գներով, միջազգային մասշտաբով դրամավարկային պայմանների խստացման հեռանկարով, թույլ արտահանմամբ, տնտեսական բարեփոխումների անխուսափելիությամբ:

Չինաստանի կառավարությունը շարունակել է միջոցառումներ իրականացնել տնտեսական աճի շարժիչ ուժը պետական-ներդրումայինից մասնավոր-սպառողականի փոխելու ուղղությամբ: Նշված քաղաքականության ընթացքից էլ, ամենայն հավանականությամբ, էապես կախված է Չինաստանի, մեծ չափով նաև համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարը առաջիկա տարիներին:

Չինաստանի՝ 2016 թ. համար կանխատեսված տնտեսական աճը կազմում է 6.6%՝ 0.3 տոկոսային կետով ցածր նախորդ տարվա ցուցանիշից և ամենացածրը համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամից ի վեր:


ԱՄՀ կողմից 2016 թ. տնտեսական աճը զարգացող երկրներում կանխատեսվել է 4.1%՝ նախորդ տարվա 4.0% աճի փոխարեն:

Համաշխարհային առևտրի ծավալները 2015 թ. արձանագրել են համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո ամենացածր մակարդակը և էական բարելավում չեն արձանագրել նաև 2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում: Չինաստանում, որին բաժին է ընկնում համաշխարհային առևտրի ծավալների ավելի քան 10.0%-ը, տնտեսական թույլ աճը, ինչպես նաև դեպի արտահանում կողմնորոշված տնտեսական մոդելից անցումը ներքին պահանջարկի ավելացմանն ուղղված մոդելին ամենաազդեցիկ գործոններն են համաշխարհային առևտրի ծավալների աճի դանդաղման համար: Միևնույն ժամանակ, ԵՄ-ի և Ռուսաստանի կողմից փոխադարձաբար կիրառվող պատժամիջոցներն էապես խոչընդոտել են համաշխարհային առևտրի ծավալների ընդլայնմանը (մանրամասն տե՛ս «Տնտեսական զարգացումները Ռուսաստանի Դաշնությունում» ներգիրում): Համաձայն ԱՄՀ կանխատեսումների՝ համաշխարհային առևտրի ծավալների տարեկան աճը 2016 թ. կկազմի 2.7%՝ նախորդ տարվա 2.6%-ի փոխարեն:

2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում պահպանվել է հիմնական ապրանքատեսակների միջազգային գների ցածր մակարդակը՝ պայմանավորված համաշխարհային տնտեսությանը և որոշ ապրանքատեսակների շուկաներին բնորոշ զարգացումներով:

Զարգացող երկրների տնտեսական աճի տեմպերը շարունակել են ցածր մնալ:


Համաշխարհային առևտրի տարեկան տոկոսային աճը




Աղբյուրը՝ ԱՄՀ:

Համաշխարհային առևտրի ծավալների նվազումը պայմանավորված է զարգացող և զարգացած խոշոր երկրների տնտեսական դանդաղ աճով:

Նավթի («բրենթ» տեսակի) գները
(ԱՄՆ դոլար՝ 1 բարելի դիմաց)



Պղնձի գները
(ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց)




Ապրանքային շուկաներում հիմնականում պահպանվել է գների ցածր մակարդակը:

Գունավոր մետաղների գների շարժը մեծապես պայմանավորվել է տնտեսական և քաղաքական զարգացումներով:

Մոլիբդենի գները


(1000 ԱՄՆ դոլար՝ 1 տոննայի դիմաց)



Հացահատիկի գները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել են:


Հացահատիկի գները

(ԱՄՆ դոլար՝ 1 բուշելի դիմաց)



Ոսկու գները

(ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց)



Աղբյուրը՝ Bloomberg Data Warehouse:

2016 թ. «Բրենթ» տեսակի նավթի միջին կիսամյակային գինը կազմել է 40.3 ԱՄՆ դոլար/բարել (նախորդ տարի գրանցված նվազման միտումը պահպանվել է): Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 30.6%-ով: Թեև տարեսկզբից արձանագրվել է նավթի գների որոշակի աճ, այնուամենայնիվ դրանք դեռևս գտնվում են ցածր մակարդակի վրա, ինչին նպաստող գլխավոր գործոնը նավթի համաշխարհային առաջարկի ծավալների և պաշարների զգալի ավելացումն է:

Գների հետագա էական աճը կանխող հիմնական գործոններն են՝ առաջարկի մեծ ծավալների պահպանման հեռանկարը, ինչպես նաև Չինաստանի տնտեսական ցածր աճի պահպանման պայմաններում հարաբերական թույլ պահանջարկը:

2016 թ. առաջին կիսամյակում շարունակվել է պղնձի և մոլիբդենի գների նվազման միտումը. պղնձի միջին կիսամյակային գինը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, նվազել է 20.7%-ով՝ մեկ տոննայի դիմաց կազմելով 4698.8 ԱՄՆ դոլար: Մոլիբդենի միջին կիսամյակային գինը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 24.4%-ով՝ մեկ տոննայի դիմաց կազմելով 15.3 հազար ԱՄՆ դոլար:

Կարճաժամկետ հեռանկարում, այլ հավասար պայմաններում, գունավոր մետաղների միջազգային գները կշարունակեն պայմանավորվել զարգացող երկրների տնտեսությունների զարգացման միտումներով, և գների էական աճ չի արձանագրվի:

Կիսամյակի ընթացքում հացահատիկի միջազգային գինը նվազման միտում է ունեցել: 2016 թ. հացահատիկի միջին կիսամյակային գինը կազմել է 5.3 ԱՄՆ դոլար/բուշել՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազելով 10.7%-ով: Կարճաժամկետ հեռանկարում ցորենի միջազգային շուկայում ակնկալվում է գնի նվազում՝ պայմանավորված ավելցուկային առաջարկով, սակայն միջնաժամկետ հատվածում ակնկալվում է գնի կայունացման միտում:

2016 թ. ոսկու կիսամյակային միջին գինը կազմել է 1220.5 ԱՄՆ դոլար՝ մեկ տրոյական ունցիայի դիմաց (նախորդ տարվա համեմատ արձանագրվել է փոքր-ինչ աճ՝ 1.2%): Կարճաժամկետ հեռանկարում համաշխարհային տնտեսության վերականգնման կանխատեսվող տեմպերի պայմաններում ոսկու գների կտրուկ տատանումներ չեն ակնկալվում:

Տնտեսական զարգացումները Ռուսաստանի Դաշնությունում

2016 թ. առաջին կիսամյակում Ռուսաստանում արձանագրվել է տնտեսական անկման տեմպերի դանդաղ նվազում: Տնտեսական անկման տեմպերի նվազման հիմնական պատճառը վերամշակող արդյունաբերության ու գյուղատնտեսության ճյուղերի դրական զարգացումներն են: Պահպանվել է նավթի գների ցածր մակարդակի բացասական ազդեցությունը տնտեսական աճի վրա, իսկ պատժամիջոցները սահմանափակել են մուտքը դեպի արտաքին ֆինանսական շուկաներ: Թեև ավելի դանդաղ տեմպերով, սակայն դեռևս շարունակվող տնտեսական անկումը պայմանավորող հիմնական գործոններն են եղել էներգառեսուրսների ցածր գները, աշխարհաքաղաքական իրավիճակը և կիրառվող պատժամիջոցները[1], ինչպես նաև կապիտալի արտահոսքն ու ազգային արժույթի մեծ տատանողականությունը: ՌԴ տնտեսության աճի վրա զսպող ազդեցություն ունեն նաև ոչ մրցունակ գործարար միջավայրը և ենթակառուցվածքների զարգացածության ցածր մակարդակը: Այնուամենայնիվ, կարճաժամկետ հեռանկարում նավթի գների որոշակի աճի սպասումների պայմաններում ակնկալվում է, որ Ռուսաստանի տնտեսական աճը կվերադառնա դրական տիրույթ:

ՌԴ պետական վիճակագրության դաշնային ծառայության տվյալների համաձայն՝ 2016 թ. առաջին կիսամյակում տնտեսական անկումը կազմել է 0.9%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 3.8%-ի փոխարեն[2]: Բացասական նպաստում են ունեցել վերամշակող արդյունաբերության, շինարարության, ներդրումների, ինչպես նաև բնակչության իրական տնօրինվող եկամուտների նվազման ցուցանիշները: Տնտեսական աճին դրական է նպաստել գյուղատնտեսության ճյուղում արձանագրված աճը:

Կիսամյակային կտրվածքով առավել խոր անկում է արձանագրել բնակելի շենքերի շահագործումը (7.4%-ով) և մանրածախ ապրանքաշրջանառությունը (5.3%-ով): Զգալիորեն նվազել են նաև կապիտալ ներդրումների և շինարարության ծավալները՝ համապատասխանաբար 6.9%-ով և 5.2%-ով: Ներդրումային գործընթացների արգելակման վրա հիմնականում ազդել են բնակչության տնօրինվող եկամտի նվազման պայմաններում սպառողական պահանջարկի նվազումն ու ֆինանսավորման աղբյուրների սահմանափակ լինելը: Նավթի գների ցածր մակարդակի պահպանումն ու արտաքին տնտեսական անորոշությունները խորացրել են առկա հիմնախնդիրները: Համաձայն պետական վիճակագրության դաշնային ծառայության տվյալների՝ հունվար-հուլիս ամիսներին արտահանումը կազմել է 127.7 մլրդ ԱՄՆ դոլար (2015 թ. նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է տ/տ 29.7%-ով):

Ներմուծումը կազմել է 83.6 մլրդ ԱՄՆ դոլար (նվազել է տ/տ 9.5%-ով): Այսպիսով՝ առևտրային հաշվեկշռի դրական մնացորդը կազմել է 44.1 մլրդ ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ նվազելով 50.6%-ով:

2016 թ. հուլիսին 12-ամսյա գնաճը կազմել է 0.5%՝ նախորդ տարվա ցուցանիշը գերազանցելով 0.1 տոկոսային կետով: ՌԴ տնտեսական զարգացման նախարարության նախնական տվյալների համաձայն՝ գործազրկության մակարդակը շարունակում է մնալ ցածր և, անտեսելով սեզոնային գործոնը, գնահատվում է 5.6%:

2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում, նախորդ կիսամյակի համեմատությամբ, արձանագրվել է Ռուսաստանի ազգային արժույթի ամրապնդում, ինչին նպաստել են նավթի միջազգային գների որոշակի աճը և ՌԴ ԿԲ-ի համեմատաբար խիստ դրամավարկային քաղաքականությունը: Մասնավորապես՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու իրական արժևորումը կազմել է 8.15%, եվրոյի նկատմամբ՝ 6.2%: ՌԴ միջազգային արտարժութային պահուստները հաշվետու կիսամյակի կտրվածքով աճել են՝ կազմելով 392,8 ԱՄՆ դոլար:

Կիսամյակի ընթացքում Ռուսաստանի կենտրոնական բանկը գնաճի շարունակական նվազման պայմաններում վերաֆինանսավորման տոկոսադրույքը վերանայել է մեկ անգամ՝ նվազեցնելով 0.5 տոկոսային կետով և սահմանելով 10.5%: Հարկ է նշել, որ բանկերի բնականոն գործունեությունն ապահովելու նպատակով ՌԴ կենտրոնական բանկը շարունակել է իրականացնել արտարժութային ռեպո գործարքներ, որոնց պահանջարկը, սակայն, կիսամյակի ընթացքում զգալի նվազել է:

2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում ՌԴ բանկային համակարգի կողմից ոչ ֆինանսական հաստատություններին և տնային տնտեսություններին տրամադրված վարկերը նվազել են 5.0%-ով (փոխարժեքի գործոնը հաշվի չառնելու դեպքում՝ 1.6%-ով): Միևնույն ժամանակ, ոչ ֆինանսական կազմակերպություններին տրամադրված վարկերում «չաշխատող» վարկերի մասնաբաժինը կազմել է 6.8%, չաշխատող սպառողական վարկերը՝ 8.5%:

---

[1] Ուկրաինայի հետ աշխարհաքաղաքական լարվածությամբ պայմանավորված՝ 2014 թ. մարտից ԱՄՆ-ի և Եվրոմիության կողմից Ռուսաստանի Դաշնության նկատմամբ մի քանի փուլերով կիրառվել են առևտրատնտեսական պատժամիջոցներ, որոնք բացասաբար են անդրադարձել կապիտալի հոսքի, արտաքին ներդրումների և ՌԴ տնտեսական աճի վրա: Հայտարարված պատժամիջոցները վերաբերում են Ռուսաստանի ֆինանսական, էներգետիկ և ռազմարդյունաբերական ոլորտներին: Մասնավորապես՝ սահմանափակումներ են դրվել զինամթերքի, երկակի նշանակության որոշ ապրանքների, ինչպես նաև նավթային ոլորտի համար անհրաժեշտ մի շարք սարքավորումների և տեխնոլոգիաների՝ Ռուսաստան արտահանման վրա: Արգելվել է նաև որևէ ֆինանսական աջակցություն, որը կվերաբերի սահմանափակումների ցանկում ընդգրկված ապրանքների առևտրին: Բացի այդ, սահմանափակումներ են դրվել նաև առանձին ֆինանսական, պաշտպանական և վառելիքաէներգետիկ կազմակերպությունների գործունեության նկատմամբ, որոնց շրջանակներում արգելվում է վերոնշյալ կազմակերպությունների կողմից 2014 թ. սեպտեմբերի 12-ից հետո թողարկված 30 օր և ավելի մարման ժամկետայնություն ունեցող ֆինանսական գործիքներով գործարքներ կատարելը:

[2] ՌԴ տնտեսության զարգացումների, գնահատումների ու կանխատեսումների վերաբերյալ տվյալները վերցվել են ՌԴ տնտեսական զարգացման նախարարության Мониторинг "О текущей ситуации в экономике Российской Федерации по итогам первого полугодия 2016 года" պարբերականից:http://economy.gov.ru/wps/wcm/connect/bfeda678-29cd-44ae-b07b-d3c6d7200d32/%D0%98%D1%82%D0%BE%D0%B3%D0%B8_2015.pdf?MOD=AJPERES &CACHEID=bfeda678-29cd-44ae-b07b-d3c6d7200d32:

1.2. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐ


2016 թվականի առաջին կիսամյակում միջազգային ֆինանսական շուկաներում կտրուկ տատանումներ չեն եղել՝ բացառությամբ Մեծ Բրիտանիայի՝ Եվրոմիությունը լքելուն կողմ քվեարկելուն հաջորդած կտրուկ վայրիվերումների, որոնք, սակայն, հաջորդ ամսվա ընթացքում գրեթե ամբողջությամբ հարթվել են: Ռիսկերի համախումբը, այնուամենայնիվ, անփոփոխ է մնացել:

Համաշխարհային տնտեսական աճը խթանելու համար մի շարք երկրներ շարունակել են ընդլայնողական դրամավարկային քաղաքականության իրականացումը, միևնույն ժամանակ, ԱՄՆ պահուստային համակարգը, նախորդ տարեվերջից հետո, տոկոսադրույքների բարձրացում ընթացիկ կիսամյակում չի իրականացրել:

Կապիտալի արտահոսքը զարգացող երկրներում շարունակվել է՝ հանգեցնելով վերջիններիս ազգային արժույթների արժեզրկման:


ԱՄՆ-ում և ԵՄ-ում պետական պարտատոմսերի եկամտաբերությունը նվազել է:

10 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը



Զարգացող և զարգացած մի շարք երկրների կենտրոնական բանկերը շարունակել են ընդլայնողական դրամավարկային քաղաքականության իրականացումը:

Կենտրոնական բանկերի տոկոսադրույքների քաղաքականությունը



Աղբյուրը՝ Bloomberg Data Warehouse:

Կիսամյակում ԴՊՀ կողմից քաղաքականության տոկոսադրույքի բարձրացում տեղի չի ունեցել:

2016 թ. առաջին կիսամյակում երկարաժամկետ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը ԱՄՆ-ում և ԵՄ-ում շարունակաբար նվազել է՝ պայմանավորված Եվրոգոտում իրականացված ծավալային խթանման ծրագրով և ԱՄՆ-ում տոկոսադրույքների հետագա բարձրացման ծրագրի հետաձգմամբ: Իրական հատվածի վարկառուների համար վարկային շուկայում իրավիճակը բարենպաստ է եղել. արձանագրվել է վարկավորման պայմանների որոշակի բարելավում և տնային տնտեսությունների ու կազմակերպությունների կողմից վարկային միջոցների նկատմամբ պահանջարկի աճ: Հարկ է նշել, որ Եվրոգոտում վարկային միջոցների ներգրավման տոկոսադրույքները գտնվել են պատմական ցածր մակարդակի վրա, մինչդեռ առևտրային բանկերի վճարունակությունը ավելի բարձր է քան 2012 թ-ին:

2016 թ. առաջին կիսամյակում ևս համաշխարհային տնտեսության անկայուն աճի ու տնտեսական նոր մարտահրավերների պայմաններում հիմնական զարգացած երկրները պահպանել են ցածր տոկոսադրույքների քաղաքականության ուղղությունը:

Մասնավորապես՝ 2016 թ. առաջին եռամսյակում ԵԿԲ-ն շարունակել է իրականացնել ակտիվների գնման ծրագիր՝ ամսական 60.0 մլրդ եվրո ծավալով, իսկ 2016 թ. մարտից վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5%-ից նվազեցրել է մինչև 0.0% և ավելացրել ակտիվների ամենամսյա գնման ծավալները՝ հասցնելով 80.0 մլրդ եվրոյի[4]:

Անգլիայի կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը պահպանել է ցածր մակարդակում, որի վերանայումը, ըստ բանկի հայտարարությունների, կախված կլինի ոչ միայն գործազրկության մակարդակից, այլև տնտեսության աշխուժացումը հաստատող մի շարք այլ ցուցանիշների փոփոխություններից:

2015 թ. դեկտեմբերին ԱՄՆ ԴՊՀ-ն, ֆինանսական ճգնաժամից ի վեր առաջին անգամ, տնտեսության կայուն վերականգնման հիմնավորմամբ բարձրացրել է քաղաքականության տոկոսադրույքը՝ սահմանելով 0.25-0.5% նպատակային միջակայք:

[4] *ԵԿԲ-ն նախատեսում է ակտիվների ամենամսյա գնման ծրագիրն իրականացնել մինչև 2017 թ. մարտը: https://www.ecb.europa.eu/mopo/implement/omt/html/index.en.html:*

Իրավասու մարմիններն ընդգծել էին, որ տոկոսադրույքների բարձրացումն աստիճանական է լինելու, այն էլ՝ բացառապես տնտեսական կայուն աճի և բարենպաստ միջազգային զարգացումների պայմաններում: 2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում տոկոսադրույքների բարձրացում տեղի չի ունեցել՝ հիմնականում պայմանավորված Չինաստանի տնտեսական թույլ աճով և ԱՄՆ աշխատաշուկայի՝ սպասումներից վատ դրական զարգացումներով: Շուկայի մասնակիցները տոկոսադրույքների հետագա աճ ակնկալում են ընթացիկ տարվա դեկտեմբերից ոչ շուտ, իսկ առաջիկա երեք տարիներին ակնկալում են տոկոսադրույքների աճ 1 տոկոսային կետով:


Տոկոսադրույքների բարձրացման սպասումների պարագայում դեպի ԱՄՆ կապիտալի ներհոսքի և բորսայական ապրանքատեսակների գների ցածր մակարդակի պայմաններում մի շարք զարգացող երկրներում պահպանվել են կապիտալի արտահոսքը և, տվյալ փաստով պայմանավորված, ներդրումների ցածր մակարդակն ու տնտեսական դանդաղ աճը:

Հաշվետու կիսամյակում հիմնական արժույթները դրսևորել են տարաբնույթ վարքագիծ: ԱՄՆ դոլարի փոխարժեքը փոքր-ինչ արժեզրկվել է եվրոյի նկատմամբ՝ պայմանավորված ինչպես ԱՄՆ-ում և եվրոպական երկրներում իրականացվող տնտեսական քաղաքականությամբ, այնպես էլ ձևավորված սպասումներով:

Զարգացող երկրների արժույթների՝ դեռևս 2013 թ. սկսած արժեզրկման միտումը ընթացիկ կիսամյակում փոխվել է արժևորման: Վերջինս բացատրել ներքին տնտեսական միտումներով՝ դժվար է. տնտեսական զարգացումները կիսամյակի ընթացքում դրական որակել չի կարելի: Ազգային արժույթների արժևորումը, ըստ ամենայնի, ԱՄՆ-ի տոկոսադրույքների աստիճանական բարձրացման հետաձգման արձագանքն էր: Արժույթների վարքագիծը հետագայում ևս պայմանավորված կլինի ինչպես ԴՊՀ քաղաքականությամբ, այնպես էլ երկրների ներքին զարգացումներով, մասնավորապես՝ արտաքին ֆինանսավորման պահանջով, ներքին դրամավարկային քաղաքականությամբ, քաղաքական կայունությամբ, բորսայական ապրանքատեսակների գնային զարգացումներով և դոլարի տատանումների նկատմամբ զգայունության աստիճանով:


Բազային ցածր տոկոսադրույքները և համաշխարհային տնտեսական անկայունությունները պայմանավորել են միջբանկային տոկոսադրույքների ցածր մակարդակի պահպանումը:

Միջբանկային տոկոսադրույքները



Աղբյուրը՝ Bloomberg Data Warehouse:

ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու և եվրոյի փոխարժեքների դինամիկան



Աղբյուրը՝ ԵԿԲ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Թեև 2016 թ. առաջին կիսամյակում համաշխարհային տնտեսության վերականգնումը շարունակվել է, սակայն սպասվածից ավելի դանդաղ տեմպով՝ պայմանավորված նվազման ուղղությամբ ռիսկերի նյութականացմամբ:

Զարգացած երկրներում, այդ թվում նաև ԱՄՆ-ում, խնդրահարույց են եղել տնտեսական աճի ցածր տեմպը, ցածր գնաճային միջավայրը, ֆինանսական համակարգում առկա ռիսկերը: Նման պայմաններում զարգացած երկրները պահպանել են ցածր տոկոսադրույքների քաղաքականության ուղղությունը, իսկ ԱՄՆ-ն, որը նախորդ տարեվերջին ցածր տոկոսադրույքների քաղաքականության ուղղության շրջադարձ էր կատարել, ընթացիկ կիսամյակում տոկոսադրույքների բարձրացում չի իրականացրել:

Զարգացող երկրներում շարունակվել են ցածր տնտեսական աճի պայմաններում կապիտալի արտահոսքը, միևնույն ժամանակ ֆինանսական կայունության տեսանկյունից ռիսկային են դարձել մասնավոր պարտքի բեռի ծավալների փոփոխությունը: Զարգացող երկրներում, տնտեսական աճին խոչընդոտող տնտեսական ռիսկերից զատ, օրակարգային են մնացել նաև աշխարհաքաղաքական, մասնավորապես՝ Ուկրաինական ճգնաժամի, Ռուսաստանի և Արևմուտքի փոխհարաբերությունների հետ կապված ռիսկերը:

Ռուսաստանի տնտեսական անկման, ՌԴ ռուբլու արժեզրկման ու մասնավոր սպառման նվազման հետևանքով շարունակել են նվազել ՌԴ-ից ստացվող ոչ առևտրային բնույթի դրամական փոխանցումների ներհոսքը և դեպի ՌԴ արտահանումը:

Համաշխարհային անկայուն տնտեսական աճը, զարգացող երկրների ցածր տնտեսական աճը և հատկապես ՌԴ-ում առկա տնտեսական հիմնախնդիրները բացասաբար են անդրադարձել ՀՀ ներդրումային միջավայրի, տնտեսական աճի և արտահանման աճի ու մասնավոր փոխանցումների վրա:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

2.1. ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐ[5]

ՀՀ գործընկեր երկրների տնտեսական հիմնախնդիրները, համաշխարհային տնտեսական ցածր աճի տեմպերի պահպանումը, աշխարհաքաղաքական անորոշությունները շարունակել են բացասական ազդեցություն ունենալ ՀՀ ներքին տնտեսության վրա՝ լրացուցիչ ռիսկեր ստեղծելով ՀՀ ֆինանսական համակարգի կայունության համար:

Կիսամյակի ընթացքում շարունակվել են ՀՀ Կառավարության կողմից իրականացված խթանող հարկաբյուջետային և ՀՀ ԿԲ ընդլայնող դրամավարկային քաղաքականությունները, ինչի շնորհիվ կիսամյակի համար գրանցվել է տ/տ 2.8% տնտեսական աճ[6]: Տնտեսական աճին հիմնականում նպաստել է արտահանելի ճյուղերի, մասնավորապես՝ արդյունաբերության ճյուղի ավելացված արժեքի բարձր աճը (տ/տ 6.8%): Ճյուղի դրական զարգացումները պայմանավորված են եղել բոլոր ենթաճյուղերի, մասնավորապես՝ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման, մշակող արդյունաբերության, էլեկտրաէներգիայի արտադրության և ջրամատակարարման համապատասխանաբար տ/տ 17.9%, 2.1%, 8.6% և 7.2% ավելացված արժեքների աճով:

Դիտարկվող ժամանակահատվածում գրանցվել է գյուղատնտեսության ճյուղի ավելացված արժեքի համեմատաբար փոքր աճ՝ տ/տ 0.3%, միևնույն ժամանակ, հունվար-հունիս ամիսների համախառն արտադրանքի ծավալն ավելացել է 3.3%-ով: Ճյուղի աճն ապահովվել է բուսաբուծության, անասնապահության և ձկնաբուծության ենթաճյուղերի թողարկման ծավալների համապատասխանաբար 2.2%, 3.8% և 2.3% աճի հաշվին:

Շինարարության ճյուղում պահպանվել են բացասական զարգացումները. առաջին կիսամյակում գրանցվել է ավելացված արժեքի տ/տ 4.8% անկում: Բացառությամբ միջազգային վարկերի և համայնքների միջոցների՝ շինարարության ֆինանսավորման մյուս բոլոր աղբյուրների գծով արձանագրվել է ծավալների նվազում:


Ծառայությունների ոլորտի ավելացված արժեքի աճը դիտարկվող ժամանակաշրջանում կազմել է տ/տ 2.0%՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի մշակույթ, զվարճություններ և հանգիստ, ֆինանսական և ապահովագրական գործունեություն ու տրանսպորտի ենթաճյուղերի համապատասխանաբար 39.8%, 3.0% և 17.5% ավելացված արժեքների աճով:

Մանրածախ առևտրի ոլորտում նվազումը չեզոքացրել է ընդհանուր մեծածախ առևտրի կիսամյակային 5.0% աճը, ինչի արդյունքում ընդհանուր առևտուրը նվազել է 0.3%-ով:

Համախառն պահանջարկի տեսանկյունից միտումները հիմնականում պահպանվել են նույն ուղղությամբ:

Առաջին կիսամյակում մասնավոր սպառումը կրճատվել է 1.4%-ով, ինչը 2015 թ. անկման տեմպերի համեմատ էականորեն դանդաղել է՝ պայմանավորված սպասվածից ավելի բարձր տնտեսական ակտիվությամբ, ձևավորված գնանկումային միջա-


Իրական ՀՆԱ-ի և տնտեսության հիմնական ճյուղերի աճը



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

2016 թ. երկրորդ եռամսյակում աճի տեմպը դադաղել է, ինչի արդյունքում կիսամյակային տնտեսական աճը կազմել է 2.8%:

ՀՆԱ ծախսային բաղադրիչները
(տեսակարար կշիռը ՀՆԱ-ում)



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

[5] *ՀՀ մակրոտնտեսական միջավայրի զարգացումները մանրամասն ներկայացված են «Գնաճի հաշվետվություն. 2016 թ. III եռամսյակ» պարբերականում:*

վայրով և առևտրի ծավալների ավելի փոքր նվազմամբ: Մասնավոր սպառման կրճատումը մեղմվել է նաև դրամավարկային պայմանների շարունակական թուլացման և ՀՀ Կառավարության հարկաբյուջետային ընդլայնողական քաղաքականության ազդեցությամբ: Մասնավորապես՝ պետական սպառմանն ուղղված ծախսերը ավելացել են տ/տ 12.4%-ով: Տնտեսության արտահանելի հատվածում իրականացված համեմատաբար մեծ ծավալի ներդրումների և իրականացվող կառուցվածքային բարեփոխումների արդյունքում մասնավոր ներդրումների նվազման տեմպերը դանդաղել են: Հաշվետու ժամանակահատվածում մասնավոր ներդրումների նվազումը գնահատվում է 6.6%: Ներդրումների անկումը պայմանավորված է եղել ինչպես ներքին պահանջարկի անբավարար մակարդակով, այնպես էլ շինարարության ճյուղում պահպանվող ցածր աճով: Ի տարբերություն մասնավոր ներդրումների՝ պետական ներդրումներն աճել են 15.6%-ով:


Տնտեսական ակտիվության դանդաղ վերականգնման պայմաններում 2016 թ. առաջին կիսամյակում տնտեսությանը տրամադրված վարկերն աճել են 3.4%-ով: Վարկավորման աճին նպաստել են ինչպես վարկերի տրամադրման պայմանների դյուրացումները, այնպես էլ վարկային պահանջարկի որոշակի աճը: Առավել մեծ չափով ավելացել են հանրային սննդի և սպասարկման այլ ոլորտներին, առևտրի ոլորտներին և գյուղատնտեսությանը ուղղված վարկերի ծավալները՝ համապատասխանաբար 18.3%, 6.9% և 10.1%-ով: Վարկային ներդրումների աճին զուգահեռ ավելացել է նաև բանկային համակարգի չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքի տեսակարար կշիռն ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքում՝ առաջին կիսամյակի վերջին կազմելով 10.3%: Կիսամյակում աճ է գրանցվել շինարարության, հանրային սննդի ու սպասարկման այլ ոլորտների, առևտրի և արդյունաբերության ճյուղերի չաշխատող վարկերի մասով: 2016 թ. երկրորդ եռամսյակի վարկային պայմանների վերաբերյալ հարցման արդյունքների համաձայն՝ վարկավորման բոլոր ուղղություններով իրականացվել են վարկային պայմանների դյուրացումներ: Միևնույն ժամանակ, դիտվել է բիզնես վարկավորման մի փոքր աճ, թեև այն նախաճգնաժամային ցուցանիշների համեմատ դեռևս գտնվում է ցածր մակարդակում:

2016 թ. երրորդ եռամսյակի համար թեև սպասվում է բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից վարկային առաջարկի ընդլայնում, այնուամենայնիվ վարկային պահանջարկը կաճի համեմատաբար ցածր տեմպով:

ՀՀ ԿԲ կողմից իրականացվող հարցումների համաձայն՝ գործարար միջավայրի ինդեքսն աճել է և 2016 թ. երկրորդ եռամսյակի համար կազմել 51.0՝ շարունակելով գտնվել կայունության միջակայքում: Ընդ որում՝ և՛ նախորդ եռամսյակի, և՛ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ցուցանիշն աճել է 0.6 կետով:


Ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2016 թ. առաջին կիսամյակում պետական բյուջեի եկամուտներն արձանագրել են 1.6% աճ[6]: Հարկ է նշել, որ եկամուտ-

Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքներ (%)



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Պետական բյուջեի հիմնական ցուցանիշները (կիսամյակային)



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

[6] *Ներառված են արտաբյուջետային միջոցները, սակայն ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրերի շրջանակներում ստացված միջոցները:*

ների աճը ապահովվել է հավաքագրված հարկերի, մասնավորապես՝ «Եկամտային հարկ» ենթահոդվածի 7.8% աճի հաշվին: Պետական ծախսերը[7], իրենց հերթին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են 6.2%-ով: Ընդ որում, աճ արձանագրվել է ծախսային գրեթե բոլոր ուղղություններով: Արդյունքում, հարկաբյուջետային քաղաքականությունը համախառն պահանջարկի վրա ունեցել է 1.0 ընդլայնող ազդեցություն՝ պայմանավորված հիմնականում եկամուտների ընդլայնող ազդեցությամբ:

Այսպիսով, պետական եկամուտների նկատմամբ ծախսերի առաջանցիկ աճի պայմաններում դիտարկվող ժամանակաշրջանում ձևավորվել է բյուջեի պակասուրդ, որը կազմել է 84.8 մլրդ դրամ:

2016 թ. հունիսին 12-ամսյա գնաճը կազմել է -1.1%: Գնանկումը հիմնականում պայմանավորվել է թույլ ներքին և արտաքին պահանջարկի արդյունքում պարենային ապրանքների գների 3.5% նվազումով, որի ընդհանուր նպաստումը գնաճին կազմել է -1.21 տոկոսային կետ:

2016 թ. հունիսին 12-ամսյա գնաճը կազմել է -1.1%:

2016 թ. առաջին կիսամյակում ընթացիկ հաշվի պակասուրդը նկատելի բարելավվել է:

2.2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Համաձայն ՀՀ ԿԲ տվյալների՝ 2016 թ. առաջին կիսամյակում ընթացիկ հաշվի պակասուրդը, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, բարելավվել է՝ կազմելով 166.6 մլն ԱՄՆ դոլար: Արդյունքում, ընթացիկ հաշիվ/ՀՆԱ հարաբերակցությունը 2016 թ. հունվար-հունիսին կազմել է -4.0%:


Ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատումը հիմնականում ապահովվել է ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշռի զգալի բարելավմամբ: Առևտրային հաշվեկշռի բարելավումն իր հերթին ներմուծման նկատմամբ ապրանքների արտահանման իրական առաջանցիկ աճի արդյունք է:

Համաձայն ՀՀ ԿԲ տվյալների՝ ապրանքների ու ծառայությունների իրական արտահանումը, ըստ վճարային հաշվեկշռի, աճել է 20.5%-ով՝ չնայած այդ ապրանքների միջազգային գների ցածր մակարդակի պահպանմանը: Միևնույն ժամանակ, իրական ներմուծման աճը կազմել է 1.2%:

Ապրանքների և ծառայությունների ներմուծումը դոլարային արժեքով նվազել է 3.9%-ով, միևնույն ժամանակ արտահանման դոլարային արժեքի աճը կազմել է 7.8%:


Հիմնական ապրանքախմբերից աճել են «Պատրաստի սննդի և գյուղատնտեսական արտադրանք», «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման ծավալները: Ներմուծման ծավալների նվազում գրանցվել է «Հանքահումքային արտադրանք» և «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերում:

Վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշներ
(կիսամյակային) *(մլն ԱՄՆ դոլար)*




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի
(կիսամյակային) *(մլն ԱՄՆ դոլար)*




[7] *Ներառյալ ծրագրերի իրականացման գրասենյակների շրջանակներում կատարված ծախսերը:*

ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի (կիսամյակային) *(մլն ԱՄՆ դոլար)*



Հայաստանի արտաքին առևտրի բաշխվածությունն ըստ երկրների (30.06.2016 թ. դրությամբ)



Աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

Ապրանքների արտահանման կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող ապրանքախմբերից հիմնականում ավելացել են «Պատրաստի սննդի արտադրանք» և «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալները՝ համապատասխանաբար 37.8%-ով և 83.4%-ով: Արդյունքում աճել է վերոնշյալ ապրանքախմբերի մասնաբաժինը ընդհանուր արտահանման մեջ:


Նվազել են «Հանքահումքային արտադրանք», «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբերի տեսակարար կշիռները:

2016 թ. առաջին կիսամյակում ՀՀ արտաքին առևտրի կենտրոնացվածության մակարդակը էապես չի փոխվել: Խոշոր առևտրային գործընկերներ են շարունակել մնալ ԱՊՀ և ԵՄ անդամ երկրները, արտահանման և ներմուծման հետևյալ տեսակարար կշիռներով. ԱՊՀ՝ 22.6% և 34.0%, ԵՄ՝ 28.2% և 23.6%: Միևնույն ժամանակ, ավելացել են Իրաք, Վրաստան, Կանադա արտահանվող ապրանքների ծավալները, Չինաստան արտահանվող ապրանքների ծավալները նվազել են:

ՀՀ արտահանման կենտրոնացվածությունն ըստ ապրանքախմբերի 2016 թ. առաջին կիսամյակում տարեվերջի համեմատ դրսևորել է դրական տեղաշարժ. արդյունքում Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսի արժեքը կազմել է 0.184:

Կիսամյակի ընթացքում աճել են անվանական աշխատավարձերը, իսկ գործազրկության մակարդակը՝ նվազել:

Միջին անվանական աշխատավարձ և գործազրկության մակարդակ



** Ցուցանիշը հաշվարկված է ըստ 01.01.2013 թ. ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի, որի համաձայն աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներում 2013 թ. հունվարի 1-ից ներառվել են նաև գործատուի կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարները:*

2.3. ՏՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԱՐՏՔԻ ԲԵՌ

Արտաքին և ներքին մակրոտնտեսական զարգացումների պարագայում 2016 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, անվանական աշխատավարձերի աճը եղել է համեմատաբար ցածր (տ/տ 2.8%): Միջին ամսական աշխատավարձերի աճին նպաստել է մասնավոր հատվածում գրանցված աշխատավարձերի աճը (տ/տ 5.7%): Պետական հատվածում գրանցվել է աշխատավարձերի տ/տ 0.5% նվազում, ինչն էլ պայմանավորել է ընդհանուր աշխատավարձերի աճի ցածր մակարդակը: Աշխատավարձերի աճի հետ մեկտեղ տ/տ 0.4 տոկոսային կետով նվազել է գործազրկության մակարդակը և կազմել 18.3%: Գործազրկության նվազումը պայմանավորված է տնտեսապես ակտիվ բնակչության համեմատ գործազուրկների թվաքանակի առաջանցիկ նվազմամբ:

Ըստ ՀՀ կենտրոնական բանկի գնահատումների՝ տարվա ընթացքում կպահպանվի աշխատավարձերի աճի միտումը և


2016 թ. համար աշխատավարձերի աճը կկազմի 3.6%[8]: Գործազրկության մասով ակնկալվում է նվազում մինչև 17.8%՝ նախորդ տարվա 18.5%-ի փոխարեն:

2016 թ. առաջին կիսամյակում զուտ ընթացիկ մասնավոր տրանսֆերտների (12.9%) և արտագնա աշխատողների զուտ վարձատրության (22.6%) նվազման տեմպերը պահպանվել են՝ պայմանավորված արտաքին տնտեսական անբարենպաստ զարգացումներով: Ըստ ՀՀ ԿԲ հարցումների՝ 2016 թ. առաջին կիսամյակում 0.4 տոկոսային կետով աճել է արտերկրից ոչ առևտրային բնույթի փոխանցումներ ստացող քաղաքային տնային տնտեսությունների մասնաբաժինը[9] և կազմել միջինում 12.2%[10]: 12-ամսյա կտրվածքով նվազել է զուտ ընթացիկ մասնավոր տրանսֆերտների և արտագնա աշխատողների վարձատրության հարաբերակցությունը ՀՆԱ-ին և կազմել 9.4%՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 12.5%-ի փոխարեն: Մասնավոր տրանսֆերտների և արտագնա աշխատողների վարձատրության նվազումն ազդել է ընթացիկ սպառման, տնային տնտեսությունների կողմից տնօրինվող եկամուտների և վարկունակության վրա: Ակնկալվում է, որ արտագնա աշխատողների վարձատրության և մասնավոր տրանսֆերտների ներհոսքի նվազման միտումը կպահպանվի 2016 թ. ընթացքում[11]:


Գնանկումային միջավայրում անվանական աշխատավարձերի բարձրացումը և գործազրկության մակարդակի կրճատումը նպաստել են տնային տնտեսությունների իրական եկամուտների աճին, իսկ արտերկրից ստացվող դրամական փոխանցումների կրճատումը բացասաբար է անդրադարձել տնային տնտեսությունների կողմից տնօրինվող եկամուտների վրա: Եկամուտների փոփոխության նման միտումների պայմաններում տնային տնտեսությունների խնայողությունները՝ ավանդներն աճել են 4.2 %-ով և կազմել 1,048.7 մլրդ ՀՀ դրամ:

Տեղի ունեցող տնտեսական զարգացումներն իրենց արտացոլումն են գտել նաև սպառողների վստահության ցուցանիշի բաղադրատարրերում[12]: 2016 թ. առաջին և երկրորդ եռամսյակներում, 2015 թ. նույն ժամանակահատվածների համեմատ, սպառողների վստահության ցուցանիշն աճել է, ինչին նպաստել է ինչպես ընթացիկ, այնպես էլ ապագա պայմանների ցուցանիշների աճը: Ընթացիկ պայմանների բաղադրատարրերից զգալիորեն աճել են ֆինանսական վիճակի փոփոխության և ընդհանուր տնտեսական վիճակի վերաբերյալ տնային տնտեսությունների գնահատականները: Այնուամենայնիվ վերջիններիս ցածր մակարդակի պայմաններում ընթացիկ պայմանների ցուցանիշը շարունակել է գտնվել կայունության 45-55 միավոր միջակայքից ներքև: Հետագա պայմանները նկարագրող ցուցանիշը պահպանվել է կայունության միջակայքում: Զգալի բարելավում է արձանագրվել գալիք եռամսյակում ֆինանսական վիճակի փոփոխության սպասումների ենթացուցանիշի մասով, որն աճել և 2016 թ.

Ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ (%)




Ապագա պայմանների ցուցանիշը և դրա բաղադրատարրերը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Զուտ ընթացիկ մասնավոր տրանսֆերտների և արտագնա աշխատողների զուտ վարձատրության նվազման տեմպերը պահպանվել են:

Զուտ մասնավոր տրանսֆերտներ և սեզոնային աշխատողների վարձատրություն




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


[8] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի «Գնաճի հաշվետվություն. 2016 թ. 3-րդ եռամսյակ» պարբերական:
[9] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2016 թ. 1-ին կիսամյակում անցկացված «Սպառողների վստահության ցուցանիշը» եռամսյակային հարցման ամփոփում: Հարցումը կատարվել է միայն քաղաքային տնային տնտեսությունների շրջանում:
[10] Միգրացիոն մարմինների կողմից դեպի ՌԴ աշխատուժի ներհոսքի կառավարման էական փոփոխություններ չեն արձանագրվել:
[11] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի «Գնաճի հաշվետվություն. 2016 թ. 3-րդ եռամսյակ» պարբերական:
[12] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2016 թ. 1-ին կիսամյակում անցկացված «Սպառողների վստահության ցուցանիշը» եռամսյակային հարցման ամփոփումներ:

Կիսամյակի ընթացքում աճել են ֆինանսական հաստատությունների նկատմամբ տնային տնտեսությունների պարտավորությունները:


Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքը



Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքներ (%)



ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպառողական վարկային պորտֆելի կառուցվածքը



1. Քարտային վարկեր, 2. Ոսկու գրավով վարկեր, 3. Ավտովարկեր, 4. Կենցաղային և համակարգչային տեխնիկայի ձեռքբերման վարկեր, 5. Այլ սպառողական վարկեր

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

երկրորդ եռամսյակում կազմել է 46.3: 2016 թ. առաջին կիսամյակում աճել է նաև գալիք եռամսյակում զբաղվածության փոփոխության սպասումների ենթացուցանիշը՝ արտացոլելով աշխատաշուկայում արձանագրված դրական զարգացումները:

Արտերկրից ստացվող միջոցների նվազումը, նախորդ տարիների համեմատ վարկային բեռի բարձր մակարդակը իրենց ազդեցությունն են ունեցել ռեզիդենտ տնային տնտեսությունների վարկունակության, ինչպես նաև վարկավորման ծավալների վրա[13]: Դիտարկվող ժամանակահատվածում վարկային հաստատությունների նկատմամբ ռեզիդենտ տնային տնտեսությունների ընդհանուր պարտավորություններն աճել են 0.5%-ով և կազմել 924.8 մլրդ դրամ՝ պայմանավորված ինչպես բանկերի (0.2%), այնպես էլ վարկային կազմակերպությունների (2.0%) և գրավատների (2.7%) կողմից տրամադրված վարկերի աճով:

Տնային տնտեսությունների վարկավորման առավել ակտիվ ուղղություն շարունակում է մնալ սպառողական վարկավորումը, ընդ որում, ՀՀ ԿԲ եռամսյակային հարցումների համաձայն, վարկային պահանջարկի ինդեքսի համեմատ վարկային առաջարկը բնութագրող ինդեքսն աճել է առավել բարձր տեմպով[14]: 2016 թ. առաջին կիսամյակում սպառողական վարկերի մասով գրանցվել է 1.5% աճ, որին հիմնականում նպաստել է ոսկու գրավով վարկերի աճը (7.4%): Կիսամյակի ընթացքում աճել են նաև կենցաղային, համակարգչային տեխնիկայի ձեռքբերման վարկերը (3.5%) և այլ սպառողական վարկերը (2.3%): Ավտովարկերի և քարտային վարկերի մասով գրանցվել է նվազում՝ համապատասխանաբար 20.9%-ով և 1.3%-ով: Սպառողական վարկավորման կառուցվածքում շարունակում են գերակշռող մասնաբաժին ունենալ քարտային (37.4%) և ոսկու գրավով (25.1%) վարկերը: Ընդհանուր առմամբ, նախորդ տարվա երրորդ եռամսյակից սկսած սպառողական վարկերի պայմանների և ընթացակարգերի դյուրինացման միտումները պահպանվել են նաև 2016 թ. առաջին կիսամյակում՝ պայմանավորված բանկերի և այլ ֆինանսական հաստատությունների միջև մրցակցության աճով: Մեղմացումները վերաբերում են վարկավորման գրեթե բոլոր ուղղություններին՝ ժամկետայնությանը, վարկարժանության գնահատմանը, ոչ տոկոսային վճարների սահմանմանը, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցությանը:

Առաջիկա եռամսյակում և՛ բանկերը, և՛ վարկային կազմակերպությունները սպասում են սպառողական վարկավորման ինչպես առաջարկի, այնպես էլ պահանջարկի աճ[14]:

2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում աճել են նաև բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրված հիփոթեքային վարկերը (0.6 %), որին նպաստել են ինչպես անշարժ գույքի վերանորոգման, այնպես էլ ձեռքբերման հիփոթեքային վարկերի աճը՝ համապատասխանաբար 4.4%-ով և 0.2%-ով: Տնային տնտեսությունների եկամուտների, վարկունակության նվազման պայմաններում հիփոթեքային վարկավորման շուկայի ակտիվացման գործում շարունակում են մեծ դերակատարություն ունենալ «Բնակարան երիտասարդներին» և Ազգային հիփոթեքային ընկերությունների կողմից իրականացվող

[13] *Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2016 թ. 1-ին կիսամյակում անցկացված «ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ» եռամսյակային հարցման ամփոփումներ:*

[14] *Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2016 թ. 1-ին կիսամյակում անցկացված «ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ» եռամսյակային հարցման ամփոփումներ:*


վերաֆինանսավորման ծրագրերը, որոնց ծավալը կիսամյակում գրեթե չի փոփոխվել՝ կազմելով ընդհանուր հիփոթեքային պորտֆելի 24.3%-ը: 2016 թ. մարտին փոփոխություններ են կատարվել «Մատչելի բնակարան երիտասարդ ընտանիքներին» պետական նպատակային ծրագրում՝ դրանում առավել մեծ թվով երիտասարդ ընտանիքներ ընդգրկելու նպատակով[15]: Հիփոթեքային շուկայի, մասնավորապես առաջնային շուկայից անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկավորման վրա դրական են անդրադարձել նաև 2015 թ. հունվարի մեկից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները[16]:

Կիսամյակային տվյալներով արտարժութային հիփոթեքային վարկերի մասնաբաժինը ընդհանուր հիփոթեքային վարկերի ծավալում շարունակել է բարձր մնալ՝ 52.7%, թեև նվազման միտումը պահպանվել է:

2016 թ. առաջին կիսամյակում ՀՆԱ համեմատ ռեզիդենտ տնային տնտեսություններին տրամադրված վարկերի փոքր-ինչ ցածր աճի պայմաններում վարկերի մասնաբաժինը ՀՆԱ-ում գտնվել է գրեթե նույն մակարդակում՝ կազմելով 18.2%: Պարտք/ավանդ հարաբերակցությունը նվազել է, որը կիսամյակի վերջին կազմել է 88.2% (2015 թ. 91.5%): Արդյունքում վարկային հաստատությունների համար տնային տնտեսությունները սկսել են հանդես գալ որպես զուտ վարկատու: Շարունակել է պահպանվել արտարժութային ավանդների բարձր տեսակարար կշիռը (70.6%), ինչը սահմանափակում է դրամային ակտիվներում ֆինանսական միջոցների տեղաբաշխման և հատկապես տնային տնտեսություններին դրամով վարկավորելու հնարավորությունները:


Տնային տնտեսությունների վարկունակության նվազման, ինչպես նաև նախորդող տարիներին վարկային պորտֆելի արագ տեմպ աճի պայմաններում 2016 թ. առաջին կիսամյակում առևտրային բանկերի վարկային ռիսկի գծով կորուստներն ավելացել են, ինչը վարկային հաստատությունների վճարունակության վրա չի ազդել, սակայն անդրադարձել է վերջիններիս շահութաբերության վրա: Բանկերում և վարկային կազմակերպություններում սպառողական «չաշխատող» վարկերի մասնաբաժինը կազմել է 10.1%, որի աճին հիմնականում նպաստել է արտարժութային սպառողական «չաշխատող» վարկերի աճը: Հիփոթեքային «չաշխատող» վարկերի մասնաբաժինն ընդհանուր հիփոթեքային վարկերում աճել է 1.3 տոկոսային կետով և կազմել 7.8%, ինչը ևս պայմանավորված է արտարժութային «չաշխատող» վարկերի աճով: Ընդհանուր առմամբ, տնային տնտեսությունների հատվածից բխող ռիսկերը անդրադարձել են ֆինանսական հաստատությունների շահութաբերության նվազման վրա, այնուամենայնիվ ՀՀ ֆինանսական համակարգի կայունությունը պահպանվում է բավարար մակարդակի վրա:

Բանկերի և վարկային կազմակերպությունների հիփոթեքային և սպառողական վարկային պորտֆելը



ՀՀ տնային տնտեսությունների պարտքի բեռը նվազել է:

Տնային տնտեսության պարտքի և եկամուտների ցուցանիշ



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Տնային տնտեսությունների վարկային պորտֆելի որակից բխող ռիսկերն ունեցել են աճի միտում:


[15] Վերոնշյալ փոփոխությունների համաձայն բարձրացվել է ծրագրի պոտենցիալ շահառու երիտասարդների տարիքային սահմանափակման առավելագույն շեմը, ավելացվել են Ծրագրի ներքո ձեռք բերվելիք բնակարանների առավելագույն արժեքը և տրամադրվող հիփոթեքային վարկերի առավելագույն գումարը:

[16] «Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձման կարգը սահմանելու մասին» թիվ 205-Ն ՀՀ Կառավարության որոշում, 2015 թ. փետրվարի 19: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները, որոնց համաձայն հիփոթեքային վարկերի սպասարկման համար վճարվող տոկոսագումարների չափով վարկառուի կողմից վճարված եկամտային հարկի գումարը վերադարձվում է ՀՀ Կառավարության կողմից:

2.4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՆԵՐ

2016 թ. առաջին կիսամյակում բնակարանների գները մնացել են գրեթե անփոփոխ:


Բնակարանների միջին գների ինդեքսը Երևանում (1 քառ. մ)



Աղբյուրը՝ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ անշարժ գույքի շուկայում առուվաճառքի գործարքների քանակը թույլ աճ է ունեցել:

Անշարժ գույքի առուվաճառքի ինդեքսը



Աղբյուրը՝ ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե:

2016 թ. առաջին կիսամյակում, արտաքին և ներքին տնտեսական անորոշությունների խորացման պայմաններում, անշարժ գույքի շուկայում աշխուժացում չի դիտարկվել: Ինչպես Երևանում, այնպես էլ հանրապետության այլ քաղաքներում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների գները[17], նախորդ տարվա երկու կիսամյակների համեմատ, մնացել են գրեթե անփոփոխ, իսկ անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերը նշանակալի չեն եղել ֆինանսական կայունության պահպանման տեսանկյունից: 2016 թ. առաջին կիսամյակում, 2015 թ. առաջին և երկրորդ կիսամյակների համեմատ, Երևանում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների շուկայական միջին գները, 1 մ^2 մակերեսի հաշվարկով, աճել են համապատասխանաբար 0.2%-ով և 0.1%-ով, իսկ այլ քաղաքներում՝ համապատասխանաբար 0.3%-ով և 0.2%-ով: Անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերի կառավարման տեսանկյունից կարևորվում է նաև անշարժ գույքի գրավով ապահովված վարկերի համար ՀՀ առևտրային բանկերի կողմից սահմանված վարկ/գրավ հարաբերակցության ցուցանիշի մակարդակը: Ընդհանուր առմամբ, այն տատանվում է 60-80% միջակայքում, որի պարագայում անշարժ գույքի գների հնարավոր տատանումներից ածանցվող վարկային ռիսկը էականորեն զսպվում է (մանրամասն տե՛ս «Առևտրային բանկերի շուկայական ռիսկ» ենթաբաժինը):

2016 թ. հունվար-հունիսին տնային տնտեսությունների տնօրինվող եկամտի նվազումը որոշակիորեն հանգեցրել է անշարժ գույքի նկատմամբ վճարունակ պահանջարկի կրճատմանը, ինչն էլ իր հերթին անդրադարձել է անշարժ գույքի շուկայի ակտիվության վրա[18]: 2016 թ. առաջին կիսամյակում, նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, Երևանում և հանրապետության այլ քաղաքներում առուվաճառքի քանակն աճել է համապատասխանաբար 0.2%-ով և 0.3%-ով: 2015 թ. հունվարի մեկից ուժի մեջ մտած «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունները որոշակիորեն նպաստել են անշարժ գույքի առաջնային շուկայի ակտիվացմանը: Նախորդ տարիների համեմատ ցածր էր նաև անշարժ գույքի ձեռքբերման հիփոթեքային վարկավորման աճը, որը կազմել է 0.2% (հիփոթեքային վարկերի վերաբերյալ մանրամասն տե՛ս «Տնային տնտեսությունների եկամուտներ և պարտքի բեռ» ենթաբաժինը):

Ըստ ՀՀ ԿԲ կողմից իրականացվող եռամսյակային հարցումների՝ անշարժ գույքի առաջնային շուկայում առուվաճառքը ավելի ակտիվ կլինի, քան երկրորդային շուկայում[19]:

2016 թ. առաջին կիսամյակում, 2015 թ. առաջին կիսամյակի համեմատ, անշարժ գույքի շուկայում ցածր ակտիվության մակարդակի պայմաններում 45.7%-ով նվազել են շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր ծավալները: Ընդ որում՝ նվազել են ինչպես կազմակերպությունների, այնպես էլ բնակչության միջոցներով ֆինանսավորվող բնակելի շենքերի գործարկ-

---

[17] Հայաստանի Հանրապետությունում անշարժ գույքի միասնական միջին գների ինդեքսի բացակայության պատճառով որպես անշարժ գույքի գնային զարգացումների չափորոշիչ է ընտրվել Երևանի բնակարանների միջին գների ինդեքսը:

[18] Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2016 թ. 1-ին կիսամյակում անցկացված «ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների վերաբերյալ» եռամսյակային հարցման ամփոփումներ:

[19] Տե՛ս նույն տեղը:

ման ծավալները՝ համապատասխանաբար 49.2%-ով և 45.2%-ով: Նախորդ տարվա համեմատ նվազել է նաև կազմակերպությունների միջոցով գործարկված բնակելի շենքերի մասնաբաժինը, որը 2016 թ. առաջին կիսամյակում կազմել է 11.8% (2015 թ. առաջին կիսամյակում՝ 12.6%): ՀՀ ԿԲ եռամսյակային հարցմանը մասնակցած՝ շենքերի շինարարությամբ զբաղվող կազմակերպությունների մեծ մասը[20] որպես անշարժ գույքի շինարարությանը խոչընդոտող հիմնական գործոն է նշել պահանջարկի նվազումը:

Կիսամյակի ընթացքում 7.9%-ով աճել է բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարությանն ուղղված վարկավորումը՝ կազմելով 72.4 մլրդ դրամ: Աճել է նաև բնակելի և ոչ բնակելի շենքերի շինարարությանն ուղղված «չաշխատող» վարկերի մասնաբաժինը այս ոլորտին տրամադրված վարկերի մեջ և կազմել 19.9%:


Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների

Ֆինանսավորման աղբյուրներ	2016 թ. առաջին կիսամյակում գործարկված բնակելի շենքեր (քառ. մ)	Տեսակարար կշիռն ընդհանուրի մեջ	Տոկոսային փոփոխությունը 2015 թ. առաջին կիսամյակի համեմատությամբ
Ընդամենը, այդ թվում՝	33 126	100%	-45.7%
պետական բյուջե	0	0	0
կազմակերպությունների միջոցներ	3 910	11.8%	-49.2%
բնակչության միջոցներ	29 216	88.2%	-45.2%

Աղբյուրը՝ ՀՀ ԱԿԾ:

Ընդհանուր առմամբ, անշարժ գույքի շուկայի ակտիվության ցածր մակարդակի պայմաններում առևտրային բանկերի համար շարունակել է առանցքային ռիսկերից մնալ անշարժ գույք հանդիսացող գրավի իրացվելիության ռիսկը, քանի որ մի կողմից ավելացել են որպես գրավ ստացված անշարժ գույքի, իսկ մյուս կողմից՝ շահագործումից դուրս և վաճառքի համար պահվող անշարժ գույքի ծավալները:


Անշարժ գույքի շուկայի վարկավորման ծավալը



Գրավի իրացվելիության ռիսկը շարունակում է մնալ առանցքային ռիսկերից:

Բանկերում շահագործումից դուրս, վաճառքի համար պահվող և գրավ համարվող անշարժ գույքի ծավալները

(մլրդ ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ԱՄՓՈՓՈՒՄ

Համաշխարհային տնտեսության դանդաղ աճի տեմպերի և ՀՀ հիմնական գործընկեր Ռուսաստանի տնտեսության բացասական զարգացումների պայմաններում 2016 թ. առաջին կիսամյակում ՀՀ-ում գրանցվել է 2.8% տնտեսական աճ: Տնտեսական աճին հիմնականում նպաստել է արդյունաբերության և ծառայությունների ոլորտներում արձանագրված թողարկման ծավալների աճը: Հայաստանի ֆինանսական կայունության ապահովման համար արտաքին հատվածի կարևոր ռիսկերից շարունակել է մնալ մաս-

[20] *Տես նույն տեղը:*

նավոր տրանսֆերտների և արտագնա աշխատողների վարձատրության նվազումը, որը բացասաբար է անդրադարձել տնային տնտեսությունների եկամուտների վրա: Եկամուտների գնողունակության վրա որոշակի դրական ազդեցություն է ունեցել կիսամյակի ընթացքում ձևավորված ցածր գնաճային միջավայրը: Չնայած մասնավոր տրանսֆերտների և գործոնային եկամուտների նվազմանը՝ ընթացիկ հաշվի պակասուրդ/ՀՆԱ ցուցանիշը կրճատվել է՝ պայմանավորված ապրանքների և ծառայությունների բացասական հաշվեկշռի զգալի բարելավմամբ:

3. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

3.1. ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՆԵՐ

2016 թվականի սկզբից ԿԲ կողմից իրականացված միջոցառումներն ունեցել են ընդլայնողական ուղղվածություն:

Առաջին կիսամյակում ԿԲ խորհուրդը չորս անգամ իջեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով:

Դրամավարկային պայմանների աստիճանական թուլացումն անդրադարձել է նաև ֆինանսական շուկայի մյուս տոկոսադրույքների վրա: Վերաֆինանսավորման տոկոսադրույքի նվազմանն անմիջապես արձագանքել են ֆինանսական շուկայի կարճաժամկետ տոկոսադրույքները, իսկ որոշակի լագով՝ նաև երկարաժամկետ տոկոսադրույքները:

ԿԲ քաղաքականության ազդակին համահունչ վարքագիծ է դրսևորել նաև միջբանկային ռեպո տոկոսադրույքը. հունիսին միջին տոկոսադրույքը կազմել է 7.75%՝ դեկտեմբերի համեմատ նվազելով 1.95 տոկոսային կետով:


Ֆինանսական շուկայում տոկոսադրույքների նվազումն արտացոլվել է պետական պարտատոմսերի եկամտաբերության կորի[21] մակարդակի փոփոխությամբ: Երկարաժամկետ տոկոսադրույքների համեմատ կարճաժամկետ տոկոսադրույքների նվազումը առավել ընդգծված էր: Արդյունքում՝ 10 տարի և 6 ամիս ժամկետայնությամբ պարտատոմսերի միջև տարբերությունը (սպրեդ) աճել է 1.2 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 5.4%:

ՀՀ ԿԲ դրամավարկային քաղաքականության մեղմացումը, գնաճային սպասումների նվազումը, ինչպես նաև բանկերի կապիտալի համալրման հաշվին իրացվելիության աճը հանգեցրել են նաև բանկերի կողմից ներգրավված և տրամադրված միջոցների տոկոսադրույքների նվազմանը:

Պետական պարտատոմսերի շուկայի միտումներն ամփոփ կարելի է ներկայացնել ՀՀ ԿԲ կողմից հաշվարկվող պետական պարտատոմսերի ինդեքսների[22] միջոցով (տե՛ս կից աղյուսակը):

Ֆինանսական շուկայում տոկոսադրույքներն արձագանքել են դրամավարկային պայմանների թուլացմանը:


ՀՀ ԿԲ հետ և միջբանկային ռեպո գործառնությունների ամսական ծավալները և տոկոսադրույքների մակարդակները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


Նվազել են բոլոր ժամկետայնությունների պարտատոմսերի եկամտաբերությունները:

ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորեր



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

6 ամիս և 10 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերի սպրեդ




---

[21] ՊՊ եկամտաբերության կորը ներկայացնում է պետական պարտատոմսերի եկամտաբերությունների և մինչև մարում ժամկետայնությունների միջև կախվածությունը: 2013 թ. հուլիսից ՀՀ կենտրոնական բանկը եկամտաբերության կորի կառուցման համար կիրառում է նոր մոտեցում, ըստ որի՝ կորը կառուցվում է Նելսոն Սիգելի վիճակագրական պարամետրական մոդելով, որը մեկ ֆունկցիայի միջոցով մոտարկում է բոլոր ժամանակահատվածների եկամտաբերության կորերը:


[22] ՀՀ պետական պարտատոմսերի համար հաշվարկվում է հինգ ինդեքս, 4-ը՝ արժեկտրոնային, 1-ը՝ զեղչատոկոսային: Արժեկտրոնային պարտատոմսերի ինդեքսներն են G03, G05, G5I, որոնք ընդգրկում են համապատասխանաբար 0-3 տարի, 0-5 տարի, 5 տարի և ավելի մարման ժամկետայնություն ունեցող պարտատոմսեր և GMI, որը արժեկտրոնային պարտատոմսերի ինդեքսն է: Ինդեքսները ներառում են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից դրամով թողարկված, կիսամյակային հաստատուն արժեկտրոններով, 1 մլրդ դրամ և ավելի շրջանառության ծավալ ունեցող պարտատոմսերը: Զեղչատոկոսային պարտատոմսերի ինդեքսը՝ TBI-ն, ընդգրկում է մեկ շաբաթ և ավելի մարման ժամկետ ունեցող զեղչատոկոսային պարտատոմսերը, որոնք ունեն 400 մլն դրամ և ավելի շրջանառություն: Մանրամասն տե՛ս www.cba.am:

Պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալները և միջին կշռված եկամտաբերությունները




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բակ:

Արժեթղթերի կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունները



2016 թ. առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի ինդեքսների բնութագրիչ ցուցանիշները

Ցուցանիշ	TBI	G03	G05	G5I	GMI
Չևափոխված դյուրացիա *(modified duration)*	0.43	1.36	1.83	5.41	3.01
Ռիսկով կշռված եկամտաբերություն	10.10	12.11	12.71	15.30	13.57
Մարման միջին ժամկետայնություն *(տարի)*	0.47	1.60	2.33	12.96	6.11
Միջին կշռված արժեկտրոն *(%)*		9.74	9.85	12.00	10.61
ՊՊ շուկայական արժեք *(մլրդ ՀՀ դրամ)*	22,076	137,559	189,665	93,762	283,426
Ինդեքսի շուկայական արժեքի փոփոխություն եկամտաբերության +/-1% փոփոխության դեպքում *(մլն ՀՀ դրամ)*	+/- 95	+/-1,869	+/-3,464	+/-5,075	+/-8,530
Ինդեքսի շուկայական արժեքի փոփոխություն եկամտաբերության փոփոխության ստանդարտ շեղման չափով *(մլն ՀՀ դրամ)*[23]	9	162	284	492	552

2016 թ. հունիսի վերջի դրությամբ շրջանառությունում առկա պետական արժեկտրոնային պարտատոմսերի ինդեքսի փոխված դյուրացիան (modified duration) կազմել է 3.01՝ տարեվերջի 2.82-ի փոխարեն, իսկ մարման միջին ժամկետայնությունը 6.11 տարի՝ տարեվերջի 5.76-ի փոխարեն: Նույն ցուցանիշները զեղչատոկոսային պարտատոմսերի համար կազմել են համապատասխանաբար 0.43 և 0.47՝ տարեվերջի 0.34 և 0.37-ի փոխարեն:

Պետական պարտատոմսերի եկամտաբերության 1% աճի/նվազման պարագայում ներդրողների հավանական վնաս/օգուտը կարող է կազմել մոտ 8.5 մլրդ դրամ կամ պետական պարտատոմսերի շուկայական արժեքի 2.3%-ը, ընդ որում՝ փոփոխության զգալի մասը սպասվում է երկարաժամկետ պարտատոմսերից, քանի որ վերջիններիս զգայունությունը տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ ավելի մեծ է:

2016 թ. առաջին կիսամյակում ներդրումային ծառայություններ մատուցող անձանց[24] կողմից արժեթղթերի շուկայում իրականացված համախառն գործառնությունները (ներառյալ՝ ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունները՝ առանց ՀՀ կենտրոնական բանկի հետ գործարքների) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել են ավելի քան 2.7 անգամ և կազմել 3 տրլն 464 մլրդ դրամ: Դա պայմանավորված է դիտարկվող կիսամյակում կնքված ռեպո գործառնությունների կտրուկ աճով: Արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները կազմել են վերոնշյալ շրջանառության 6.8%-ը:

2016 թ. առաջին կիսամյակում ՀՀ պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիությունը (ըստ իրացվելիության մակարդա-

[23] *Ռիսկով կշռված եկամտաբերության ստանդարտ շեղում 31/12/2015-30/06/2016 թթ.:*

[24] *30.06.2016 թ. դրությամբ ներդրումային ծառայություններ մատուցող անձ են 20 առևտրային բանկեր և 8 ներդրումային ընկերություններ:*

կը բնութագրող ցուցանիշի)[25] նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է: Մայիսը բնութագրվել է ամենաբարձր իրացվելիությամբ: Պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության մակարդակի տատանողականությունը ցածր է եղել. իրացվելիության ցուցանիշի ստանդարտ շեղումը կազմել է 1.8:

Պետական արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ընդհանուր ծավալում միջնաժամկետ և երկարաժամկետ պետական պարտատոմսերով իրականացված առուվաճառքի գործառնությունների տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 62.3% և 32.1%, իսկ կարճաժամկետ պարտատոմսերինը՝ 5.6%:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց իրականացրած ռեպո և հակադարձ ռեպո գործառնությունները (առանց ՀՀ կենտրոնական բանկի հետ գործառնությունների), նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, ավելացել են ավելի քան երեք անգամ և կազմել 3 տրլն 229 մլրդ դրամ. ընդ որում՝ գրեթե բոլոր ռեպո գործառնություններն իրականացվել են պետական արժեթղթերով:

Կարգավորվող շուկայում արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների ընդհանուր շրջանառությունը 2016 թ. առաջին կիսամյակում կազմել է 19.5 մլրդ դրամ: Կարգավորվող շուկայում իրականացված առուվաճառքի գործառնություններում գերակշռել են պետական պարտատոմսերով իրականացված գործառնությունները՝ 49.5%: Կորպորատիվ պարտատոմսերով և բաժնետոմսերով իրականացված առուվաճառքի գործառնությունները կազմել են համապատասխանաբար 21.0% և 29.5%:


Տարեսկզբից ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունների կառուցվածքում կարգավորվող շուկայի մասնաբաժինը կազմել է 8.3%:

2016 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ արժեթղթերի շուկայի կապիտալացումը կազմել է 128.7 մլրդ դրամ՝ տարեվերջի համեմատ աճելով 24.9 մլրդ դրամով կամ 24%-ով: Կապիտալացման կենտրոնացվածությունն ըստ թողարկող ընկերությունների նվազել է. առաջատար երեք ընկերությունների կշիռը կազմել է 81.7%, իսկ առաջատար հինգ ընկերությունների կշիռը՝ 95.0%:

Բաժնետոմսեր թողարկողների առաջատար եռյակի և հինգյակի կենտրոնացվածությունը 2010-2016 թթ. առաջին կիսամյակներում՝ ըստ կապիտալացման մակարդակի (%)


Ժամկետ	Առաջատար երեք ընկերությունների կապիտալացում (%)	Առաջատար հինգ ընկերությունների կապիտալացում (%)
31.12.2010	80.1	94.7
31.12.2011	83.8	96.6
31.12.2012	78.8	96.2
31.12.2013	79.8	96.7
31.12.2014	86.5	97.2
31.12.2015	83.0	98.0
30.06.2016	81.7	95.0

ՊՊ առուվաճառքի գործառնությունների և ՊՊ գործառնությունների ծավալ/շրջանառությունում առկա ՊՊ ծավալ հարաբերակցությունը




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունները *(ներառյալ՝ ԿԲ հետ ռեպո գործառնությունները)*



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և փոխարժեքները




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[25] Պետական պարտատոմսերի շուկայի իրացվելիության ցուցանիշը հաշվարկվում է որպես ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից պետական պարտատոմսերի երկրորդային շուկայում ամսվա ընթացքում իրականացված առուվաճառքի գործառնությունների և շրջանառությունում առկա պետական պարտատոմսերի ծավալների հարաբերակցություն:

3.2. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ՇՈՒԿԱ

Փոխարժեքները ՀՀ արժութային շուկայում
(ՀՀ դրամ)



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

2016 թվականի առաջին կիսամյակում արժութային շուկայում էական տատանումներ չեն գրանցվել: Կիսամյակի ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը գերազանցապես դրսևորել է արժևորման միտում: 2016 թվականի հունիսին 2015-ի տարեվերջի համեմատ ՀՀ դրամի միջին ամսական շուկայական փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորվել է 1.13%-ով, իսկ եվրոյի և ռուսական ռուբլու նկատմամբ՝ արժեզրկվել համապատասխանաբար 2.12%-ով և 5.78%-ով:

2016 թվականի հունիսի վերջին 2015-ի տարեվերջի համեմատությամբ իրական արդյունավետ փոխարժեքը արժևորվել է 3.23%-ով, իսկ անվանական արդյունավետ փոխարժեքի արժևորումը կազմել է 1.30%[26]:

ԱՄՓՈՓՈՒՄ

2016 թվականի առաջին կիսամյակում դրամավարկային պայմանների թուլացումն անդրադարձել է ֆինանսական շուկայի տոկոսադրույքների վրա:

Պետական պարտատոմսերի եկամտաբերությունների նվազումը հանգեցրել է եկամտաբերության կորի մակարդակի նվազման ամբողջ երկայնքով:

2016 թվականի առաջին կիսամյակում ֆինանսական շուկաներում տատանումները չեն առաջացրել էական ռիսկեր և չեն անդրադարձել ֆինանսական կայունության վրա:

[26] ՀՀ դրամի փոխարժեքի վարքագիծը, ինչպես նաև ՀՀ արտաքին մրցունակությունը ուսումնասիրելու նպատակով դիտարկվում են նաև անվանական և իրական արդյունավետ փոխարժեքները, որոնք հաշվարկվում են արտաքին ապրանքաշրջանառության մեջ տասներկու հիմնական գործընկեր երկրներին (Եվրոգոտի, Ռուսաստան, Ուկրաինա, Հարավային Կորեա, Բուլղարիա, Շվեյցարիա, Իրան, ԱՄՆ, Թուրքիա, Վրաստան, Ճապոնիա, Չինաստան) բաժին ընկնող համապատասխան կշիռների հիման վրա:


4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

2016 թվականի առաջին կիսամյակում տարածաշրջանային զարգացումներից բխող մակրոտնտեսական անորոշությունների նվազումը և արտաքին հատվածից ստացվող դրամական հոսքերի կայունացման հեռանկարը որոշակի ակտիվություն առաջ բերեցին ֆինանսական համակարգի մասնակիցների շրջանում: Այս պայմաններում ֆինանսական միջնորդությունը վերականգնման միտում է դրսևորել: Ֆինանսական համակարգի ընդհանուր ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշները համապատասխանաբար ավելացել են 0.6 և 1.2 տոկոսային կետերով և կազմել 77.4% և 44.6%:

Ֆինանսական համակարգի խոշորագույն մասնակից է շարունակում մնալ բանկային համակարգը, որին բաժին է ընկնում ֆինանսական համակարգի ակտիվների 88.4%-ը: Այս համատեքստում ֆինանսական կայունության գնահատման տեսանկյունից առավելապես կարևորվում են բանկային համակարգի գործունեության ռիսկերի բացահայտումն ու գնահատումը: Ապահովագրական, արժեթղթերի շուկաների և ֆինանսական համակարգի մյուս մասնակիցների մասնաբաժինները շարունակում են մնալ փոքր, և ֆինանսական համակարգի կայունության վրա նրանց գործունեության ազդեցությունը նշանակալի չէ:

Ֆինանսական կայունության տեսանկյունից առավելապես կարևորվում է բանկային գործունեության ռիսկերի կառավարումը:

Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքը ըստ ֆինանսական հաստատությունների



1. Բանկեր,
2. Վարկային կազմակերպություններ,
3. Ապահովագրական ընկերություններ,
4. Ներդրումային ընկերություններ,
5. Այլ ֆինանսական կազմակերպություններ

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


4.1. ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐ

Բանկային համակարգի կայունության քարտեզը

Բանկային համակարգի կայունության վարքագծի վերաբերյալ ընդհանրական պատկերացում է տալիս բանկային համակարգի կայունության քարտեզը, որն արտացոլում է բանկերին բնորոշ ռիսկերը բնութագրող ցուցանիշների փոփոխությունը որոշակի ժամանակաշրջանում:

Բանկային համակարգի կայունության քարտեզի բաղադրիչները[27] 2016 թ. առաջին կիսամյակում, 2015 թ. երկրորդ կիսամյակի համեմատ, մատնանշում են ռիսկերի նվազման մասին՝ հիմնականում պայմանավորված բանկային համակարգի տարբեր ցուցանիշների դրական փոփոխություններով (մանրամասն տե՛ս «Վարկային ռիսկ», «Իրացվելիության ռիսկ», «Շուկայական ռիսկ», «Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն» ենթաբաժիններում):


Բանկային համակարգի կայունության քարտեզ



[27] *Բանկային համակարգի կայունության քարտեզում օգտագործվել են կապիտալի համարժեքությունը, ակտիվների որակը, շահութաբերությունը, իրացվելիությունը, տոկոսադրույքի ռիսկը և արտարժութային ռիսկը բնութագրող ցուցանիշները: Քարտեզում ցուցանիշներն օգտագործելուց առաջ նորմավորվել են 1-10 չափողականությամբ, հաշվարկվել են ԱՄՀ մեթոդաբանությանը համապատասխան: Արժեքների մոտեցումը քարտեզի կենտրոնին վկայում է ռիսկի նվազման, իսկ կենտրոնից հեռացումը՝ ռիսկի աճի մասին: Բանկային համակարգի կայունության քարտեզը չի կարող մեկնաբանվել որպես ֆինանսական կայունության մակարդակի արտացոլում. այն ընդամենը պատկերացում է տալիս ներառված ռիսկերի մակարդակի փոփոխության վերաբերյալ՝ աճե՞լ է, թե՞ նվազել:*

4.1.1. Ֆինանսական միջնորդություն, կենտրոնացվածություն

Ֆինանսական միջնորդության մակարդակը




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Տարեսկզբի համեմատ, Հայաստանում գործող 21 բանկերից 4 խոշորագույն բանկերի ակտիվների և պարտավորությունների մասնաբաժինները աճել են համապատասխանաբար 1.1 և 1.8 տոկոսային կետով, իսկ ընդհանուր կապիտալի մասնաբաժինը՝ նվազել 1.8 տոկոսային կետով՝ կիսամյակի վերջին կազմելով համապատասխանաբար 45.1%, 47.7% և 35.5%[28]:


Ըստ Հերֆինդալ-Հիրշմանի՝ ամփոփ ցուցանիշների (ակտիվներ, պարտավորություններ, ընդհանուր կապիտալ) գործակիցների[29] բանկային համակարգի կենտրոնացվածությունը պահպանվել է ցածր մակարդակում, ինչը սահմանափակում է ֆինանսական կայունության վրա կենտրոնացվածության ռիսկի ազդեցության հավանականությունը:

4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և ընդհանուր կապիտալի տեսակարար կշիռները ՀՀ բանկային համակարգում



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Օտարերկրյա ներդրողների մասնակցությունը ՀՀ բանկային համակարգի կանոնադրական կապիտալում



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից

Ցուցանիշներ	31.12.13	31.12.14	31.12.15	30.06.16
Ընդհանուր ակտիվներ	0.0699	0.0728	0.0764	0.0791
Ընդհանուր պարտավորություններ	0.0727	0.0751	0.0800	0.0845
Ընդհանուր կապիտալ	0.0613	0.0627	0.0630	0.0607

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[28] Հաշվետվության հրապարակման պահին Հայաստանի Հանրապետությունում գործում են 19 առևտրային բանկեր (բանկերի քանակի նվազումը երկու առևտրային բանկերի միացման արդյունք է) և մեկ զարգացման բանկ («Համահայկական բանկ» ԲԲԸ):

[29] Հերֆինդալ-Հիրշմանի գործակիցն ընդունում է արժեքներ 0-1 միջակայքում և բնութագրում կենտրոնացվածությունը (0-ին մոտ արժեքները բնութագրում են կենտրոնացվածության ցածր աստիճան):

4.1.2. Վարկային ռիսկ

Ֆինանսական կայունության պահպանման տեսանկյունից բանկային համակարգի վարկային ռիսկն է դիտարկվում որպես կարևորագույն ռիսկ: Առևտրային բանկերի ռիսկով կշռված ակտիվներում վարկային ռիսկի մասնաբաժինը կազմում է 89.8% (31.12.2015 թ. դրությամբ՝ 89.1%): Այս համատեքստում խիստ կարևորվում է առևտրային բանկերում վարկային ռիսկի պատշաճ կառավարումը:

2016 թվականի առաջին կիսամյակում բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերը ավելացել են 3.4%-ով: Վարկային պորտֆելում առավել մեծ մասնաբաժին ունեն սպառողական, արդյունաբերության և առևտրի ոլորտների վարկերը՝ համապատասխանաբար 20.0%, 18.2% և 17.4%:

Չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը (հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի ռիսկային դաս ունեցող) ընդհանուր վարկերում և դեբիտորական պարտքերում կիսամյակի ընթացքում աճել է 1.3 տոկոսային կետով և կազմել 8.7%: Ըստ ռիսկայնության դասերի՝ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները կազմել են համապատասխանաբար 2.5%, 3.1% և 3.1% (31.12.2015 թ. դրությամբ՝ համապատասխանաբար 3.3%, 2.2% և 1.9%): Վարկային պորտֆելի որակի վատացմանը նպաստել են հատկապես նախորդ տարիներին վարկային պորտֆելի արագ տեմպ աճը, ինչպես նաև տնտեսական աճի տեմպերի դանդաղումը:


Կիսամյակի ընթացքում վարկային պորտֆելի որակի զգալի նվազում արձանագրվել են շինարարության, հանրային սննդի, սպասարկման ոլորտի և արդյունաբերության ճյուղի վարկերում, դեբիտորական պարտքերում: Նշված ճյուղերին տրամադրված վարկերում և դեբիտորական պարտքերում չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի մասնաբաժինները համապատասխանաբար ավելացել են 6.4, 2.4 և 2.0 տոկոսային կետով և կազմել 15.9%, 16.2% և 11.2%:

Վարկային ներդրումների ճյուղային բաշխվածության տեսանկյունից՝ ըստ տնտեսության ճյուղերի վարկային ներդրումների, Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքսը կիսամյակի վերջին կազմել է 0.11 միավոր՝ բնութագրելով բանկային համակարգում վարկային պորտֆելի բաշխվածության չափավոր կենտրոնացվածություն: Նույն ցուցանիշի մեծությունը, հաշվարկված ըստ բանկերի միջինի, կազմել է 0.2 միավոր: Բանկային համակարգի համեմատ, ըստ առանձին բանկերի՝ վարկային ներդրումների ճյուղային կենտրոնացվածության միջին ցուցանիշի բարձր արժեքը ցույց է տալիս որոշ բանկերում վարկային ներդրումների ճյուղային կենտրոնացվածության համեմատաբար բարձր մակարդակի առկայություն:

Վարկային պորտֆելի կենտրոնացվածության տեսանկյունից՝ տարեսկզբի համեմատ վարկային ներդրումներում խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումների տեսակարար կշիռը աճել է 0.3 տոկոսային կետով և կազմել 25.2%[30]:

Վարկային ռիսկը դիտարկվում է որպես կարևորագույն ռիսկ:


Առևտրային բանկերի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը



1. Վարկային ռիսկ, 2. Տոկոսադրույքի ռիսկ, 3. Գործառնական ռիսկ, 4. Արտարժութային ռիսկ, 5. Կապիտալի գործիքների գնային ռիսկ


Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Ըստ տնտեսության ճյուղերի վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշռի փոփոխությունը
(սլաքի վերջնակետը 30.06.2016 թ. դրությամբ է, իսկ սկզբնակետը՝ 31.12.2015 թ. դրությամբ)



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[30] Խոշոր փոխառուների գծով բանկի ռիսկը գերազանցում է բանկի միջին ամսական նորմատիվային ընդհանուր կապիտալի 5%-ը՝ հաշվի առնելով փոխկապվածությունը:


Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքը ըստ տնտեսության ճյուղերի



Խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումների հարաբերությունը ընդհանուր վարկային ներդրումներին



Վարկերի կորուստների դինամիկ աճի դեպքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի քանակը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

***Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ*[31]**

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի
Բանկային համակարգի վնասի մեծությունը	33.8 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 6.4%-ը	20.6 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 3.9%-ը	60.5 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 11.5%-ը
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	16.5%	16.9%	15.8%

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Տարեսկզբին իրականացված սթրես-թեստերի արդյունքների համեմատ, 2016 թվականի առաջին կիսամյակի վերջի սթրես-թեստերի արդյունքները բարելավվել են՝ հիմնականում պայմանավորված կանոնադրական կապիտալի համալրման և զուտ շահույթի հաշվին բանկերի կապիտալի համարժեքության աճով: Դիտարկվող սթրես-սցենարում որոշ բանկերում արձանագրվել են կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջների խախտման դեպքեր, սակայն այդ բանկերում կապիտալը բավարար է վարկային ռիսկից բխող հնարավոր վնասները ամբողջությամբ կլանելու համար: Այս առումով՝ բանկային համակարգում անվճարունակության խնդիրների ի հայտ գալու հավանականությունը գնահատվում է բավականին ցածր:

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենար
	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը մինչև շոկային իրավիճակի հանդես գալը	17.4%
Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը շոկային իրավիճակի հանդես գալուց հետո	17.3%

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների կատարումից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստի արդյունքներով՝ առանձին բանկերում կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշի նվազումը չի գերազանցի 0.5 տոկոսային կետը, և որևէ բանկում կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի խախտում չի արձանագրվի: Այս համատեքստում հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի ազդեցությունը ֆինանսական կայունության խոցելիության վրա գնահատվում է աննշան:

[31] *Հաշվետվությունում ներկայացված սթրես-սցենարները չեն կանխատեսում այս կամ այն ռիսկերի դրսևորումը, այլ նպատակ ունեն բացահայտելու ֆինանսական համակարգի թույլ կողմերը, գնահատելու վերջինիս կողմից ռիսկերը չեզոքացնելու ունակությունը:*

4.1.3. Իրացվելիության ռիսկ


2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում առևտրային բանկերի համախառն իրացվելիության մակարդակը գրեթե չի փոփոխվել, իսկ արտարժութային իրացվելիության մակարդակը որոշակի նվազման միտում է ցուցաբերել: Ընդհանուր իրացվելիության նորմատիվային ցուցանիշը մնացել է անփոփոխ՝ 28.0%, իսկ ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշը աճել է 10.6 տոկոսային կետով և կազմել 153.5% (նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 15% և 60%): Առաջին խմբի արտարժույթների ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները նվազել են համապատասխանաբար 3.8 և 16.9 տոկոսային կետերով և կազմել 15.7% և 83.8% (նվազագույն սահմանաչափերը՝ համապատասխանաբար 4% և 10%): Ըստ առանձին բանկերի՝ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշները պահպանվել են պահանջվող նորմատիվային սահմանաչափերի ներքո և որևէ բանկում իրացվելիության նորմատիվային պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Ըստ ակտիվների և պարտավորությունների ժամկետային կառուցվածքի՝ մինչև 90 օր ժամկետային հորիզոնում ակտիվների գծով դրամական ներհոսքերը գրեթե ամբողջությամբ ծածկում են պարտավորությունների չվերաֆինանսավորման դեպքում դրանց գծով ենթադրվող դրամական արտահոսքերը: Կարճաժամկետ հորիզոնում իրացվելիության զգալի ճեղքվածք առկա է միայն 91-365 օր ժամկետային հորիզոնում, որը, բանկային միջնորդության խորացմանը զուգընթաց, վարկերի ժամկետայնության ավելացման տրամաբանական հետևանքն է[32]: Մինչև 30 օր (ներառյալ՝ ցպահանջ), մինչև 3 ամիս և մինչև 1 տարի մարման ժամկետային խմբերում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշները կազմել են համապատասխանաբար 105.2%, 94.8% և 80.4%[33]: Ընթացիկ իրացվելիության ապահովման առումով՝ հատկապես կարևորվում է մինչև 30 օր (ներառյալ՝ ցպահանջ) ժամկետային խմբում ակտիվների և պարտավորությունների գծով դրամական հոսքերի համատեղումը: Այն հետճգնաժամային շրջանում մշտապես եղել է 90%-110%՝ փաստելով բանկերի ընթացիկ իրացվելիության շարունակական ապահովման կարողության մասին:

Ընդհանուր պարտավորությունների կենտրոնացվածության առումով՝ 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արձանագրվել է ռիսկերի որոշակի աճ. ընդհանուր պարտավորություններում խոշոր պարտավորությունների տեսակարար կշիռը աճել է 0.9 տոկոսային կետով և կազմել 23.9%[34]: Արտաքին վարկային պարտավորությունները նվազել են 11.6%-ով, ընդ որում՝ միջազգային ֆինանսական կառույցներից ներգրավված միջոցները նվազել են 22.3%-ով (մասնաբաժինը ընդհանուր արտաքին վարկային պարտավորություններում կազմել է 31.3%): Հիմնական վարկատու երկրներն են՝ Նիդեռլանդները՝ 21.8%, Լյուքսեմբուրգը՝ 13.5%, ԱՄՆ՝ 11.2% և Մեծ Բրիտանիան՝ 6.9%: Երկարաժամկետ պարտավորությունների տեսակարար կշիռը տարեսկզբի համեմատ աճել է 1.0 տոկոսային կետով և կազմել


Առևտրային բանկերիը շարունակում են ապահովել բավարար իրացվելիություն

ՀՀ առևտրային բանկերի իրացվելիության նորմատիվների փաստացի և նորմատիվային մեծությունների շարժը




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Բանկային համակարգի կարճաժամկետ ակտիվների հարաբերությունը պարտավորություններին՝ ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


---

[32] Իրացվելիության դիրքերը հաշվարկվել են որպես համապատասխան ժամկետային խմբերում ակտիվների և պարտավորությունների հարաբերակցություն:

[33] Ժամկետային խմբերի համար ակտիվների և պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշների հաշվարկում հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունները ներառված են 20% կշռով:


[34] Խոշոր պարտատերերի գծով բանկի պարտավորությունները գերազանցում են ընդհանուր պարտավորությունների 5%-ը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:

Բանկային համակարգի վարկերի և ֆինանսավորման ավանդային աղբյուրների կառուցվածքը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի դեպքում իրացվելիության նորմատիվները խախտող առևտրային բանկերի քանակը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

94.2%, ինչը գրեթե բացառում է կարճաժամկետ հորիզոնում այդ պարտավորությունների վերաֆինանսավորման ռիսկերը:

Վարկային պորտֆելի ֆինանսավորման աղբյուրների կայունության տեսանկյունից՝ վարկային ներդրումների և ավանդների հարաբերակցության ցուցանիշը տարեսկզբի համեմատ ավելացել է 1.2 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 113.6%[35]:

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի մարում	Ցպահանջ միջոցների 25%-ի և ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների 25%-ի մարում
Բանկային համակարգի ընդհանուր իրացվելիություն	22.1%	24.6%	18.0%
Բանկային համակարգի ընթացիկ իրացվելիություն	111.5%	171.0%	115.4%

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Տարեսկզբին իրականացված սթրես-թեստերի արդյունքների համեմատ, 2016 թվականի առաջին կիսամյակի իրացվելիության ռիսկի սթրես-թեստերի արդյունքները փոքր-ինչ բարելավվել են: Դիտարկվող վատթարագույն սթրես-սցենարներում որոշ բանկերում արձանագրվում են ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային պահանջների խախտումներ: Այդուհանդերձ, այդ բանկերում բարձր իրացվելի ակտիվները գրեթե ամբողջությամբ բավարար են պարտավորությունների սիմուլացվող արտահոսքը ծածկելու համար: Այս համատեքստում բանկային համակարգի ֆինանսական կայունությունը խոցող իրացվելիության ռիսկի դրսևորման հավանականությունը գնահատվում է ցածր:

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենարի դեպքում
	Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների 50%-ի կատարում
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ընդհանուր ակտիվներ	25.0%
Բանկային համակարգի բարձր իրացվելի ակտիվներ/ցպահանջ պարտավորություններ	136.7%

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների կատարումից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-թեստի արդյունքների համաձայն՝ սթրես-սցենարների հանդես գալու դեպքում որոշ բանկերում արձանագրվում են ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվային ցուցանիշների խախտումներ: Այդուհանդերձ, այդ բանկերի բարձր իրացվելի ակտիվներն ամբողջությամբ բավարար են պայմանական պարտավորությունները մարելու համար: Այս համատեքստում, ֆինանսական կայունության վրա ազդեցության առումով, հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկը գնահատվում է ոչ նշանակալի:

[35] *Վարկերի և ավանդների հարաբերակցության ցուցանիշի հաշվարկում վարկերը ներառում են տնտեսության իրական հատվածին տրամադրված վարկերը, իսկ ավանդները՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց ներգրաված միջոցները:*

4.1.4. Շուկայական ռիսկ

Արտարժութային ռիսկ

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ՀՀ դրամի՝ այլ արժույթների նկատմամբ փոխարժեքների տատանումների հետևանքով արտարժույթի վերագնահատման արդյունքում բանկային համակարգն ունեցել է 636 մլն դրամ օգուտ (կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 0.1%-ը). ընդ որում՝ վերագնահատման արդյունքում օգուտ է ունեցել 6 բանկ, իսկ վնաս՝ 14 բանկ: Արտարժույթի առուվաճառքի գործարքներից և ածանցյալ գործիքներից բանկային համակարգն ապահովել է 7.6 մլրդ դրամ զուտ եկամուտ:

Կիսամյակի ընթացքում տնտեսությանը տրամադրված վարկերում արտարժութային վարկերի տեսակարար կշիռը աճել է 0.6 տոկոսային կետով և կազմել 67.2%: Արտարժութային ավանդների տեսակարար կշիռն ընդհանուր ավանդներում նվազել է 2.5 տոկոսային կետով և կազմել 68.8%: Բանկային համակարգի արտարժութային կարճ զուտ դիրքը (ածանցյալ գործիքները ներառյալ) կիսամյակի վերջին կազմել է 16.2 մլրդ դրամ կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 3.0%-ը (31.12.2015 թ. դրությամբ՝ 25.4 մլրդ դրամ կամ ընդհանուր նորմատիվային կապիտալի 5.4%-ը)[36]:

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 5%-ով արժևորման (արժեզրկման) դեպքում օգուտ (վնաս)	**Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 5%-ով արժևորման (արժեզրկման) դեպքում օգուտ (վնաս)**	**Հնարավոր առավելագույն տասնօրյա վնասը՝ գնահատված VaR մոդելով**
Բանկային համակարգի օգուտը/վնասը՝ արտարժույթի վերագնահատման արդյունքում	662 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.12%-ը (662 մլն դրամ)	174 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.03%-ը (174 մլն դրամ)	508 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.09%-ը

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-թեստում[37] դիտարկվող հնարավոր վատագույն սթրես-սցենարների դրսևորման դեպքում արտարժութային բաց դիրքի հետևանքով բանկերի հնարավոր կորուստները նշանակալի չեն, իսկ ֆինանսական կայունության խոցելիության վրա դրանց ազդեցությունը թույլ է:

Տոկոսադրույքի ռիսկ

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգում տոկոսադրույքի ռիսկը պահպանվել է ցածր մա-

Շուկայական ռիսկի հնարավոր ազդեցությունը ֆինանսական կայունության վրա բավականին թույլ է գնահատվում:

Բանկային համակարգի՝ արտարժույթի առուվաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[36] *Ածանցյալ գործիքները ներառում են Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիտչ (փակագծում Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման A+(A1) և A+(A1)-ից բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական (ազգային) բանկերի, ֆինանսական կազմակերպությունների և միջազգային հեղինակավոր կառույցների հետ կնքված ածանցյալ գործիքները:*

[37] *Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (այն չի համարվում սթրես-սցենար, քանզի VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հիմքում ընկած են 30.06.2016 թ. դրությամբ բանկերի արտարժութային դիրքերը:*

կարդակում: Ակտիվների և պասիվների կառավարման ներքո առևտրային բանկերը կիրառում են ըստ մարման ժամկետային խմբերի խիստ սահմանաչափեր, որոնց պայմաններում ակտիվների և պարտավորությունների ներկա արժեքների միջին կշռված ժամկետայնության (դյուրացիա) ճեղքվածքը տատանվում է կես տարուց մինչև մեկ տարվա շրջանակներում: Այս համատեքստում շուկայական տոկոսադրույքների հնարավոր տատանումների դեպքում անմիջական կորուստների ազդեցությունը առևտրային բանկերի ֆինանսական վիճակի վրա թույլ է գնահատվում:

Ընդհանուր ակտիվներում շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

30.06.2016 թ.	**Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով աճի (նվազման) ազդեցությունը կապիտալի տնտեսական արժեքի վրա՝ գնահատված «դյուրացիայի մեթոդով»**	**Շուկայական տոկոսադրույքների 2 տոկոսային կետով աճի (նվազման) դեպքում առաջիկա երեք ամսվա զուտ տոկոսային եկամտի շեղում սպասվող եկամտից՝ գնահատված «տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների ճեղքվածքի մեթոդով»**
Բանկային համակարգի օգուտ/վնաս	-10.7 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 2.0%-ը (10.7 մլրդ դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 2.0%-ը)	-641 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.1%-ը (641 մլն դրամ կամ բանկային համակարգի կապիտալի 0.1%-ը)

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման վատատեսական սթրես-թեստերի արդյունքների համաձայն՝ շուկայական տոկոսադրույքների փոփոխությունների դեպքում հնարավոր կորուստները կապիտալի նկատմամբ տատանվում են միջինը 3.3%-ի շրջանակում: Այս համատեքստում՝ շուկայական տոկոսադրույքների տատանումների արդյունքում բանկային համակարգի հնարավոր վնասները նշանակալի չեն, և դրանց ազդեցությունը ֆինանսական կայունության վրա գնահատվում է ցածր:

Գնային ռիսկ

2016 թվականի առաջին կիսամյակում բանկային համակարգի գնային ռիսկը պահպանվել է ցածր մակարդակում: Բանկային համակարգի ընդհանուր ակտիվներում շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների մասնաբաժինը աճել է 0.3 տոկոսային կետով և կիսամյակի վերջին կազմել 6.6% (31.12.2015 թ.՝ 6.3%):

Շուկայական տոկոսադրույքների տատանումների արդյունքում շահույթ/ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումից բանկային համակարգն ունեցել է 867 մլն դրամի զուտ եկամուտ:

Անշարժ գույքի գների տատանումներով պայմանավորված ռիսկերը պահպանվել են կառավարելի շրջանակում: ՀՀ տարածքում գործող բանկերը շարունակել են հիփոթեքային վարկեր տրամադրել հիմնականում անշարժ գույքի շուկայական արժեքի 60-80%-ից ոչ ավելի (Loan to Value ratio), կիրառել վարկառուների վարկունակության գնահատման բավականին խիստ մոտե-

ցում: Բանկերի կողմից ընդունված վերոնշյալ սահմանափակումներն էականորեն զսպում են անշարժ գույքի գների հնարավոր տատանումներից ածանցվող վարկային ռիսկը:

Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ


Անշարժ գույքի 30% արժեզրկման սցենար	30.06.2016 թ.
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված բանկի սեփականություն հանդիսացող անշարժ գույքի վերագնահատմամբ *(գնային ռիսկ)*	13.4 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 2.6%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի[38] 30%-ի չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) *(վարկային ռիսկ)*	19.0 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 3.6%-ը)
Բանկային համակարգի վնասը՝ պայմանավորված սթրես-սցենարի դրսևորման դեպքում խոցելի վարկային պորտֆելի 100%-ով չվերադարձմամբ (հաշվի առնելով այդ վարկերի դիմաց գրավադրված գույքի՝ արժեզրկված գնով իրացումը) *(վարկային ռիսկ)*	63.2 մլրդ դրամ (կամ բանկային համակարգի կապիտալի 12.0%-ը)

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Անշարժ գույքի 30% արժեզրկման սթրես-սցենարի դրսևորման դեպքում բանկերի հնարավոր առավելագույն կորուստները (գնային և վերջինից ածանցված՝ վարկային ռիսկերի տեսանկյունից) տարեսկզբի համեմատ ավելացել են՝ հիմնականում պայմանավորված անշարժ գույքով ապահովված վարկերի գծով վարկի և գրավի արժեքի հարաբերակցության աճով: Ելնելով վերջին մի քանի տարիների զարգացումների ներքո անշարժ գույքի գների չափավոր տատանողականության դրսևորման միտումներից՝ անշարժ գույքից բխող վարկային ռիսկի և գնային ռիսկի ազդեցությունը ֆինանսական կայունության տեսանկյունից գնահատվում է ոչ խոցելի:

Առևտրային բանկերի կապիտալի համարժեքությունը ցուցաբերում է բարելավման միտումներ:

Նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը




Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

4.1.5. Կապիտալի համարժեքություն և եկամտաբերություն

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը ավելացել է 1.2 տոկոսային կետով և կազմել 17.4%: Ըստ առանձին բանկերի՝ ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվային ցուցանիշը նույնպես պահպանվել է նվազագույն 12% սահմանաչափից բարձր մակարդակում, և որևէ բանկում նորմատիվային պահանջի խախտում չի արձանագրվել: Բանկերի կապիտալի համարժեքության բարելավումը հիմնականում տեղի է ունեցել գործառնական գործունեությունից զուտ եկամտի, կանոնադրական կապիտալի համալրման, ինչպես նաև երկարաժամկետ ստորադաս փոխառությունների ներգրավման հաշվին: Առևտրային բանկերի կապիտալի համարժեքության վրա բացասական են ազդել վարկային պորտֆելի որակի նվազումը և կարգավորման պահանջների ներքո հաշվեկշռային ընդհանուր կապիտալից կատարվող նվազեցումները:


Առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքություն -Waterfall



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[38] Խոցելի վարկային պորտֆելը բանկի այն վարկերի մնացորդների հանրագումարն է, որի մնացորդային մեծությունները գերազանցում են դրանց դիմաց գրավադրված անշարժ գույքի 30% արժեզրկված արժեքները:

Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Կիսամյակի ընթացքում առևտրային բանկերի նորմատիվային ընդհանուր կապիտալը ավելացել է 10.6%-ով և կազմել 524.9 մլրդ դրամ: Ռիսկերը կլանելու ունակության առումով՝ ընդհանուր նորմատիվային կապիտալը բնութագրվում է բարձր որակական կառուցվածքով. հիմնական կապիտալի (CET1) մասնաբաժինը ընդհանուր կապիտալում կազմում է 84.1%:

Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ ՖՀՄՍ) համաձայն՝ 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 12.3 մլրդ դրամ, որի պարագայում ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները (տարեկանացված) կազմել են համապատասխանաբար 0.7% և 4.7% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ 0.3% և 1.8%):

ՀՀ ԿԲ ներկայացվող վերահսկողական հաշվետվությունների[39] համաձայն՝ բանկային համակարգի զուտ շահույթը կազմել է 5.6 մլրդ դրամ, ընդ որում՝ շահույթով են աշխատել 14 բանկ, իսկ վնասով՝ 7 բանկ: Այս դեպքում ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները (տարեկանացված) կազմել են համապատասխանաբար 0.3% և 2.1% (նախորդ տարվա նույն ժամանակաշրջանում՝ -0.5% և -2.9%):

Առևտրային բանկերի ըստ կապիտալի շահութաբերությունը բարելավվել է, լևերիջի (ակտիվներ/կապիտալ) նվազումը բացասական ազդեցություն է ունեցել վերջինիս վրա: Ըստ ակտիվների շահութաբերությունը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճել է վարկային պորտֆելի որակի որոշակի բարելավման հետևանքով՝ զուտ մասհանումների և ակտիվների հարաբերակցության 1.1 տոկոսային կետով նվազման արդյունքում:

Բանկային համակարգի եկամուտների և ծախսերի կառուցվածքում աճել են տոկոսային եկամուտների, տոկոսային և ոչ տոկոսային ծախսերի մասնաբաժինները, և նվազել ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումների և այդ պահուստից վերադարձների մասնաբաժինները: Նշված փոփոխությունները բացատրվում են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ վարկային պորտֆելի որակի որոշակի բարելավմամբ:

[39] *Տարբերվում է ՖՀՄՍ-ից ակտիվների գծով ակտիվների հնարավոր կորուստների պահուստին հատկացումների մասով:*

4.2. ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ֆինանսական համակարգի երկրորդ խոշոր հատվածը վարկային կազմակերպություններն են, որոնց ակտիվները կազմում են ֆինանսական համակարգի ընդհանուր ակտիվների 8.4%-ը: Դիտարկվող ժամանակահատվածում վարկային կազմակերպություններն ապահովել են ակտիվների, պարտավորությունների և ընդհանուր կապիտալի զգալի աճ:


Վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի մեծությունները

(հազար ՀՀ դրամ)

Ցուցանիշ	31.12.2015	30.06.2016	Աճ (%)
Ակտիվներ	308,627,870	330,206,944	7.0%
Պարտավորություններ	176,420,773	176,040,048	-0.2%
Կապիտալ	132,207,097	154,166,896	40.6%
Զուտ շահույթ	10,331,546	6,813,578	

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի աճի տեմպը 33.6 տոկոսային կետով գերազանցել է ընդհանուր ակտիվների աճի տեմպը, ինչի արդյունքում ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը աճել է 3.9 տոկոսային կետով և կազմել 46.7%:

Վարկային կազմակերպությունների շահույթը, հաշվարկված ըստ ՖՀՄՍ-ի, կազմել է 7.0 մլրդ դրամ, որի դեպքում շահութաբերությունն ըստ ակտիվների (RoA) և շահութաբերությունն ըստ կապիտալի (RoE) համապատասխանաբար կազմել են 4.3% և 9.5%:


Ըստ ԿԲ վերահսկողական հաշվետվությունների՝ կիսամյակի ընթացքում շահույթով են աշխատել 21 վարկային կազմակերպություն, իսկ վնասով՝ 11 կազմակերպություն: Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ըստ ակտիվների (RoA) և ըստ կապիտալի (RoE) շահութաբերության ցուցանիշները աճել են համապատասխանաբար 0.4 և 1.5 տոկոսային կետով՝ կազմելով 3.6% և 8.5%:

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վարկային պորտֆելում չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը նվազել է 0.3 տոկոսային կետով և կազմել 6.3%: Ըստ տնտեսության ճյուղերի բաշխվածության՝ չաշխատող վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռները համեմատաբար բարձր են սպառողական, շինարարության և առևտրի ոլորտներին տրամադրված վարկերում՝ համապատասխանաբար 18.1%, 11.0% և 10.6%:

Նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված զուտ մասհանումների և միջին ընդհանուր ակտիվների մեծության հարաբերակցության ցուցանիշը նվազել է 0.1 տոկոսային կետով և կազմել 1.3%:

Իրացվելիության տեսանկյունից՝ ակտիվների և պարտավորությունների բոլոր ժամկետային զամբյուղներում (մինչև 180 օր /ներառյալ՝ ցպահանջ/, 180 օրից մինչև մեկ տարի, 1 տարուց ավելի) ակտիվների ծավալները գերազանցել են պարտավորու-

Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ճյուղերի



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

թյունների ծավալները՝ վկայելով այլ հավասար պայմաններում վարկային կազմակերպությունների իրացվելիության ցածր ռիսկի մասին:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ[40]


30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	Միաժամանակ հսկվող, ոչ ստանդարտ և կասկածելի դասերի վարկերի 25%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի	**Կասկածելի դասի վարկերի 75%-ի դասակարգում անհուսալի դասի վարկերի**	**Ստանդարտ դասի վարկերի 30%-ի դասակարգում հսկվող դասի վարկերի**
Վարկային կազմակերպությունների վնասի մեծությունը	3.6 մլրդ դրամ կամ նորմատիվային կապիտալի 2.4%-ը	927 մլն դրամ կամ նորմատիվային կապիտալի 0.6%-ը	6.8 մլրդ դրամ կամ նորմատիվային կապիտալի 4.5%-ը

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Բանկային համակարգի համեմատ, վարկային կազմակերպությունների կապիտալացումն ավելի բարձր է, և, ըստ տարբեր սթրես-սցենարների, վարկային կազմակերպությունները լիովին ունակ են կլանելու հնարավոր վնասները:

4.3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը 30.06.2016 թ. դրությամբ



1. Ավանդներ բանկերում, 2. Պետական և ոչ պետական արժեթղթեր (ներառյալ ռեպո համաձայնագրերով վաճառված արժեթղթերը), 3. Ստացվելիք գումարներ ուղղակի ապահովագրության գծով, 4. Հիմնական միջոցներ, 5. Ապագա ժամանակաշրջանի ծախսեր և ապահովագրության գծով կանխավճարներ, 6. Վերաապահովագրողի բաժինն ապահովագրական պահուստներում, 7. Բանկային հաշիվներ և դրամական միջոցներ, 8. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ, 9. Սուբրոգացիայի հետևանքով առաջացած պահանջներ, 10. Տրամադրված փոխառություններ, 11. Այլ ակտիվներ

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

2016 թ. հունիսի 30-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական գործունեություն իրականացնելու լիցենզիա են ունեցել 7 ապահովագրական ընկերություններ:

2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների ակտիվները աճել են 4.3%-ով և 30.06.2016 թ. կազմել 42.9 մլրդ դրամ, պարտավորությունները նվազել են 0.4%-ով՝ կազմելով 24.3 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալն ավելացել է 11.0%-ով՝ կազմելով 18.6 մլրդ դրամ: ՀՀ ֆինանսական համակարգում ապահովագրական ընկերությունների մասնաբաժինը մնացել է անփոփոխ՝ 2016 թ. հունիսին կազմելով ֆինանսական համակարգի ակտիվների 1.1%-ը: Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը, 2016 թվականի առաջին կիսամյակի ընթացքում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ավելացել է 1.5%-ով՝ կազմելով 16.2 մլրդ դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ընթացքում նշված ցուցանիշը ավելացել է 11.2%-ով):

Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող մյուս ցուցանիշը՝ ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 0.62%[41]: Ինչ վերաբերում է բնակչության

[40] *Սթրես-սցենարները կառուցված են վարկային կազմակերպությունների վարկերի անփոփոխ ծավալների և գրավադրված գույքի անտեսման վարկածով (ըստ որի՝ վարկերն անհուսալի դասակարգվելու սցենարում վարկերի դիմաց գրավադրված անշարժ գույքի օտարման հնարավորությունը չի դիտարկվում):*


[41] *2015 թ. տվյալներով՝ զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով «Ապահովագրավճարներ/ՀՆԱ» ցուցանիշը միջինում կազմել է 3.61%, զարգացող երկրներում՝ 1.39% (աղբյուրը՝ Swiss Re, Sigma No 3/2016, մայիս 2016):*

մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարներին, ապա այս ցուցանիշը 2016 թ. հունիսին կազմել է 10,538 դրամ՝ 2015 թ. համեմատ աճելով 0.8%-ով:

2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում ապահովագրական ընկերությունների վնասաբերության ցուցանիշը, տարեվերջի համեմատ, նվազել է 3.1 տոկոսային կետով և կազմել 45.8%[42]: Ապահովագրական ընկերությունների ծախսատարության ցուցանիշը 2016 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա համեմատ, նվազել է 1.2 տոկոսային կետով և կազմել 28.6%[43]:

Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռները տարեվերջին կազմել են համապատասխանաբար 36.2% և 63.8%, կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 203.1% (կապիտալի համարժեքության նորմատիվի նվազագույն սահմանաչափը կազմում է 100%):

ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Վճարունակության ռիսկ


Ստորև դիտարկվող հնարավոր սթրես-սցենարների (հատուցումների հաճախականության աճ՝ 10.0%, հատուցվող գումարների աճ՝ 5.0%) դրսևորման դեպքում գնահատվել է ապահովագրական ընկերությունների վճարունակության մակարդակի փոփոխությունը: Իրականացված սթրես-թեստերի արդյունքները վկայում են, որ վճարունակության մակարդակը զգալի փոփոխությունների չի ենթարկվի, և ապահովագրական համակարգի՝ ֆինանսական կայունության տեսանկյունից ռիսկերի առաջացման հավանականությունը շատ փոքր է:

Վճարունակության գնահատման սթրես-սցենար

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենար	
	Հատուցումների հաճախականության աճ՝ 10% և հատուցվող գումարների աճ՝ 5%	**ՆՀՊՊ շոկային աճ 25%**
Ապահովագրական համակարգի սպասվող վնասի ավելացում կամ եկամտի նվազում սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	0.9 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 4.7%-ը	0.4 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 2.1%-ը
Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	193.6%	198.9%

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


Ապահովագրավճարներ / ՀՆԱ հարաբերակցությունը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ որոշ երկրներում (2015 թ.)



1. Ուկրաինա, 2. Թուրքիա, 3. Ռուսաստան, 4. Ռումինիա, 5. Վրաստան, 6. Ղազախստան, 7. Ադրբեջան, 8. Հայաստան 2015, 9. Հայաստան 2016-06

Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, Swiss Re, Sigma No 4/2015:

Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության ցուցանիշները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


Վարկային ռիսկ

Ապահովագրական համակարգի միջոցների տեղաբաշխումը ցածր ռիսկային ակտիվներում հնարավորություն է տալիս ներդրումային ռիսկը պահելու ցածր մակարդակի վրա: Տեխնիկա-

[42] *Վնասաբերության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ (զուտ հաշվեգրված հատուցումներ + զուտ պահանջների պահուստների փոփոխություն + կարգավորման ծախսեր)/(զուտ հաշվեգրված ապահովագրավճարներ – դադարեցված պայմանագրերի գծով հետվերադարձվող զուտ գումարներ – ՀԱՊ-ի փոփոխություն):*

[43] *Ծախսատարության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով՝ ոչ տոկոսային ծախսեր/(զուտ հաշվեգրված ապահովագրավճարներ - դադարեցված պայմանագրերի գծով հետվերադարձվող զուտ գումարներ – ՀԱՊ-ի փոփոխություն):*

Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռները 30.06.2016 թ. դրությամբ



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

կան պահուստներին համարժեք ակտիվները հիմնականում տեղաբաշխված են բանկային ժամկետային և ցպահանջ ավանդներում, ՀՀ պետական և ոչ պետական պարտատոմսերում:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ	
	Ստանդարտ դասի ակտիվների 30%-ի դասակարգում հսկվող դասի	Ստանդարտ դասի ակտիվների 5%-ի դասակարգում անհուսալի դասի
Ապահովագրական համակարգի վնասի մեծությունը	0.7 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 4.0%-ը	1.3 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 7.3%-ը
Ապահովագրական համակարգի ընդհանուր կապիտալի համարժեքությունը սթրես-սցենարի դրսևորման դեպքում	196.9%	191.7%

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Վարկային ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքները ցույց են տալիս, որ ապահովագրական համակարգի հնարավոր կորստի մեծությունը փոքր է:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-թեստերի արդյունքները վկայում են, որ արտարժութային ռիսկից ապահովագրական ընկերությունների հնարավոր կորուստները նշանակալի չեն:

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ[44]

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենարներ		
	ԱՄՆ դոլարի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 5%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Եվրոյի նկատմամբ ՀՀ դրամի յուրաքանչյուր 5%-ով արժեզրկման (արժևորման) դեպքում օգուտ (վնաս)	Հնարավոր առավելագույն տասնօրյա վնասը՝ գնահատված VaR մոդելով
Ապահովագրական համակարգի օգուտը / վնասը արտարժույթի վերագնահատման դեպքում	70.5 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.4 %-ը (-70.5 մլն)	0.3 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.001%-ը (-0.3 մլն)	18.7 մլն դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 0.1%-ը

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Իրացվելիության ռիսկ

Ապահովագրական համակարգի իրացվելիության ռիսկի մակարդակը ցածր է, ինչի մասին վկայում է նաև սթրես-սցենարի արձանագրած արդյունքը:

[44] *Դիտարկվող սթրես-սցենարներով և VaR մոդելով (վերջինս չի համարվում սթրես-սցենար, քանի որ VaR-ի հաշվարկում հաշվի են առնվում արտարժույթների փոխարժեքների պատմական շարքերը) գնահատված կորուստների հաշվարկում կատարվում է ենթադրություն, որ 10 օրվա ընթացքում ապահովագրական համակարգի արտարժութային դիրքը չի փոփոխվի:*

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար

30.06.2016 թ.	Դիտարկվող սթրես-սցենար
	ՆՀՊՊ շոկային աճ 25%
Ապահովագրական համակարգի ՆՀՊՊ-ի անհրաժեշտ աճ սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	0.4 մլրդ դրամ կամ համակարգի նորմատիվային կապիտալի 2.1%-ը
Ապահովագրական համակարգի իրացվելիությունը սթրես-սցենարի հանդես գալու դեպքում	568.2%

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Ընդհանուր առմամբ, ապահովագրական շուկայի կշիռը ֆինանսական համակարգում շարունակում է մնալ փոքր: Ապահովագրական ընկերությունների ռիսկերը վերահսկելի շրջանակներում են և ֆինանսական կայունության տեսանկյունից խոցելի չեն:

4.4. ՊԱՐՏԱԴԻՐ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ


2016 թ. առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության տարածքում պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների գործունեություն իրականացնելու լիցենզիա են ունեցել 2 ներդրումային ֆոնդի կառավարիչներ, որոնցից յուրաքանչյուրը կառավարում է 3 պարտադիր կենսաթոշակային ֆոնդ:

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը 30.06.2016 թ. դրությամբ (Net Asset Value - NAV)


Կենսաթոշակային ֆոնդերի կառավարչի անվանումը	Կենսաթոշակային ֆոնդի անվանումը	Զուտ ակտիվների արժեք (NAV)
Ամունդի Ակբա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՓԲԸ	*Հավասարակշռված ֆոնդ*	684 մլն դրամ
	Պահպանողական ֆոնդ	21.4 մլրդ դրամ
	Կայուն եկամտային ֆոնդ	384 մլն դրամ
Ցե Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա ՍՊԸ	*Հավասարակշռված ֆոնդ*	258 մլն դրամ
	Պահպանողական ֆոնդ	20.9 մլրդ դրամ
	Կայուն եկամտային ֆոնդ	161 մլն դրամ

2016 թ. առաջին կիսամյակի վերջում կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը կազմել է 43.8 մլրդ դրամ, զուտ ակտիվներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 0.86%՝ 2015 թ. տարեվերջի համեմատ աճելով 0.24 տոկոսային կետով: 2016 թ. առաջին կիսամյակի վերջին կենսաթոշակային ֆոնդերի ակտիվ մասնակիցների թիվը կազմել է 155 հազ. մարդ: Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումների կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի ցուցանիշը, 2015 թ. համեմատ, նվազել է և կազմել 0.31: 2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում, 2015 թ. համեմատ, ֆոնդերի ներդրումների կառուցվածքում ավելացել են ներդրումները ոչ պետական պարտատոմսերում և դրամական միջոցներում ու ավանդներում՝ համապատասխանաբար 2-ական տոկոսային կետով: Ֆոնդերի արտարժութային ակտիվների տեսակարար կշիռը կազմում է 36.3% կամ 15.9 մլրդ դրամ, որի գերակշիռ մասը կամ 13.4 մլրդ դրամը բաժնային արժեթղթերն են:

Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները 31.12.2015 թ. դրությամբ



Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները 30.06.2016 թ. դրությամբ



1. ՀՀ պետական պարտատոմսեր, 2. Բաժնային արժեթղթեր, 3.Դրամական միջոցներ և ավանդներ, 4. Այլ պարտատոմսեր, 5. Այլ ակտիվներ,

Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

4.5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ[45]

2016 թ. առաջին կիսամյակում կարգավորվող շուկայում առուվաճառքի թույլատրվել են 19 հաշվետու թողարկողների 35 դասի արժեթղթեր. ընդ որում՝ թողարկողներից երկուսը թողարկել են ինչպես բաժնետոմսեր, այնպես էլ՝ պարտատոմսեր:

Կիսամյակի վերջի դրությամբ թողարկված բաժնետոմսերի ընդհանուր ծավալը կազմել է 43.4 մլրդ դրամ, իսկ պարտատոմսերի ծավալը՝ 30.4 մլրդ դրամ: Թողարկված բաժնետոմսերի ծավալում չորս առևտրային բանկերի մասնակցությունը կազմել է 58.3%, իսկ պարտատոմսերի ընդհանուր ծավալում չորս առևտրային բանկերի մասնակցությունը՝ 57.7%: Թողարկված 23 պարտատոմսերից 12-ը արտարժութային են, որոնց կշիռը 56.9% է:

2016 թ. առաջին կիսամյակում ՀՀ արժեթղթերի շուկայում գործել են ներդրումային ծառայություն մատուցող 20 բանկ և 8 ներդրումային ընկերություններ:


Տարեվերջի համեմատ ներդրումային ընկերությունների ակտիվները աճել են 32.8%-ով՝ կազմելով 38.0 մլրդ դրամ, իսկ ընդհանուր կապիտալը՝ 20.9%-ով՝ կազմելով 5.0 մլրդ դրամ: Ներդրումային ընկերությունների ընդհանուր շահույթը կազմել է 590.7 մլն դրամ. բոլոր ընկերություններն աշխատել են շահույթով:

Ներդրումային ընկերությունների կապիտալի համարժեքության նորմատիվը տարեվերջի համեմատ աճել է 0.9 տոկոսային կետով և հունիսի վերջին կազմել է 24.3%: Ներդրումային ընկերությունների վարկային ռիսկը կազմել է ռիսկով կշռված ակտիվների 77.8%-ը, շուկայական ռիսկը՝ 20.6%-ը, իսկ գործառնական ռիսկը՝ 1.6%-ը: Ներդրումային ընկերությունների շուկայական ռիսկի կառուցվածքում գերակշռել է տոկոսադրույքի ռիսկը՝ կազմելով 82.5%, արտարժութային և բաժնային արժեթղթերի գնային ռիսկերը կազմել են համապատասխանաբար 16.9% և 0.5%: Ներդրումային ընկերությունների կապիտալի համարժեքությունը գտնվում է սահմանված նվազագույն մակարդակից բարձր, և վերոնշյալ ռիսկերը գտնվում են թույլատրելի սահմաններում:

2016 թ. առաջին կիսամյակում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում վարվել են 2234 արժեթղթերի թողարկողների ռեեստրներ և այդ արժեթղթերի 106946 սեփականատերերի ռեեստրներ: Առաջին կիսամյակի ընթացքում Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիայում իրականացվել է արժեթղթերի փոխարկման 27 գործարք, ինչի արդյունքում արժեթղթերի քանակը ավելացել է 27.4 հազար հատով և կազմել 623.8 հազար:

Ընդհանուր առմամբ, արժեթղթերի շուկայի մասնակիցների գործունեությունը ֆինանսական կայունության խոցելիության տեսանկյունից գնահատվում է ցածր ռիսկային:

Ներդրումային ընկերությունների կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ակտիվների կառուցվածքը 30.06.2016 թ. դրությամբ



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

[45] *ՀՀ արժեթղթերի շուկայի մասնակիցներն են արժեթղթեր թողարկողները և արժեթղթերում ներդրումներ իրականացնողները, ներդրումային ծառայություններ մատուցող անձինք, ներդրումային ֆոնդերի կառավարիչները, Կենտրոնական դեպոզիտարիան և արժեթղթերի կարգավորվող շուկայի օպերատորը:*

ԱՄՓՈՓՈՒՄ

2016 թ. առաջին կիսամյակում դիտարկվել է ֆինանսական միջնորդության ցուցանիշների աճի միտում: Առևտրային բանկերում արձանագրվել է տնտեսության վարկավորման ծավալների աճ, ինչը, սակայն, ուղեկցվել է նաև վարկային պորտֆելի վերադարձելիության որոշակի նվազմամբ: Վարկային պորտֆելի որակի վատացմանը նպաստել են հատկապես նախորդ տարիներին վարկային պորտֆելի արագատեմպ աճը, ինչպես նաև վերջին տարիների տնտեսական աճի տեմպերի դանդաղումը: Այդուհանդերձ, բանկային համակարգի կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը բարելավվել են հիմնականում բանկերի կողմից կանոնադրական կապիտալի համալրումների արդյունքում՝ նպաստելով ֆինանսական կայունության ամրապնդմանը:

Ոչ բանկ ֆինանսական հաստատությունները արձանագրել են գործունեության ծավալային ընդլայնում, իսկ նորմատիվային ցուցանիշները պահպանվել են պահանջվող միջակայքում:

5. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ

Կարևորելով վճարային համակարգերի նշանակությունն ու ազդեցությունը դրամավարկային քաղաքականության և երկրի ֆինանսական կայունության վրա՝ Կենտրոնական բանկը շարունակում է առանձնահատուկ ուշադրություն դարձնել համակարգային նշանակություն ունեցող վճարային և արժեթղթերի հաշվարկային համակարգերին, դրանց գործունեությունն ապահովող հեռահաղորդակցման ցանցերին:


Միջբանկային հաշվարկները Հայաստանի Հանրապետության տարածքում հիմնականում (վճարումների ծավալի 99%-ից ավելին) կատարվում են Կենտրոնական բանկի համակարգերով[46]:

5.1. ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ ՀՀ ԿԲ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ

ԷՎՀ գործունեության մշտադիտարկման շրջանակներում արձանագրված ցուցանիշները վկայում են, որ համակարգն անվտանգ է, և կայունության առումով խնդիրներ չեն ստեղծվում:

2016 թ. առաջին կիսամյակում Կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգով (ԷՎՀ) կատարվել է 6789.5 մլրդ ՀՀ դրամի մոտ 1.9 մլն վճարում (վճարային հաղորդագրություն):

ԷՎՀ-ով վճարումների ծավալն ու քանակը՝ առանց բորսայական վճարումների



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Հաշվետու ժամանակաշրջանում վճարումների ծավալը և քանակը առաջին եռամսյակում կտրուկ նվազելուց հետո վերականգնվել են և շարունակել արագ աճի տեմպ գրանցել: ԷՎՀ վճարումներում ամենամեծ մասնաբաժինը կազմում են միջբանկային վճարումները: Այնուամենայնիվ, երկրորդ եռամսյակում ԷՎՀ-ի ծավալային աճի վրա նշանակալի ազդեցություն են ունեցել Կենտրոնական բանկի հետ գործառնությունները: Դրանք հիմնականում ՀՀ ԿԲ-ի հետ դրամական միջոցների ներգրավման գործիքի հետ կապված դրամական հոսքեր են, որոնք իրենց բնույթով վճարում չեն, այլ հանդիսանում են իրացվելիության շարժ:

ԷՎՀ-ով վճարումների քանակի շարժի վրա հիմնականում ազդեցություն են թողնում միջբանկային վճարումները՝ պայմանավորված նաև այն հանգամանքով, որ վերջիններիս հիմնական մասը նախաձեռնվում է հատային հաղորդագրություններով, իսկ Կենտրոնական բանկի հետ կապված գործարքների քանակը շատ քիչ է և ընդհանուր վճարումներում չնչին մաս է կազմում:

Համակարգում ռիսկայնությունը դիտարկվում է ստորև ներկայացվող ուղղություններով:

Վարկային ռիսկ

ԷՎՀ-ում վարկային ռիսկը բացակայում է:

Համակարգում հաշվարկային բանկի (Կենտրոնական բանկի) վարկային ռիսկը բացակայում է, քանի որ իր թղթակցային հաշվին միջոցների անբավարարության դեպքում մասնակիցը կարող է օգտվել միջօրյա ռեպո գործիքից, որն ապահովված է ՀՀ պե-

[46] *ՀՀ ԿԲ համակարգերով վճարումները ներառում են էլեկտրոնային վճարումների համակարգով (այսուհետ՝ ԷՎՀ) կատարված վճարումները՝ առանց բորսայական գործառնությունների մեծության, ԿԲ դրամավարկային քաղաքականության անուղղակի գործիքներով գործարքների հետ կապված վճարումները, ԿԲ ներքին վճարումները, ինչպես նաև ԱրՔա քարտային համակարգի վերջնահաշվարկների հետ կապված վճարումները և Պետական արժեթղթերի հաշվառման ու հաշվարկների իրականացման համակարգով արժեթղթերով գործառնությունների դրամային հաշվարկների հետ կապված վճարումները (այսուհետ՝ ՊԱՀՀՀ): ՀՀ վճարահաշվարկային բնագավառի, այդ թվում՝ համակարգերի վերաբերյալ մանրամասն կարելի է տեղեկանալ «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» (2010 թ.) հրապարակումից:*

տական պարտատոմսերով, ՀՀ կենտրոնական բանկի պարտատոմսերով և/կամ բարձր վարկանիշ ունեցող կորպորատիվ պարտատոմսերով, իսկ ներգրավված միջոցի չափը հաշվարկվում է պարտատոմսի շուկայական արժեքով նվազեցրած սկզբնական մարժայով (haircut): Միաժամանակ, բացակայում է նաև ստացող կողմի վարկային ռիսկը, քանի որ վերջինս տեղեկանում է իրեն հասցեագրված վճարման մասին միայն վճարման վերջնական և անվերադարձելի դառնալուց հետո[47]:

Իրացվելիության ռիսկ

Հաշվետու ժամանակահատվածում իրացվելիության ռիսկի գնահատման համար կիրառվող սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը[48] գերազանցել է նախորդ տարվա շեմը, ընդ որում՝ մարտին հասնելով 5.3-ի (առավելագույնը 4.7՝ 2015 թ. նոյեմբերին):

Ցուցանիշի՝ ընդհանուր առմամբ բարձր մակարդակը պայմանավորված է դեռևս 2014 թ. դեկտեմբերին պարտադիր պահուստավորման նորմատիվի հետ կապված կարգավորման դաշտում կատարված փոփոխություններով, ինչի արդյունքում բանկերը ՀՀ կենտրոնական բանկում իրենց ՀՀ դրամով թղթակցային հաշիվներին պահում են մեծ ծավալի իրացվելիություն: Օրվա սկզբի իրացվելիության միջին ցուցանիշները հաշվետու ժամանակահատվածում պահպանել են նույն մակարդակը, մինչդեռ վճարումների ծավալը (հաշիվների դեբետային շարժը) նվազել է՝ որոշակի աճ գրանցելով երկրորդ եռամսյակի ընթացքում: Այս ամենը հանգեցրել է սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման ցուցանիշի մեծության ավելացմանը, ինչը դրական է անդրադարձել համակարգում իրացվելիության ռիսկի կառավարման վրա:


Վերը նշված ցուցանիշի առումով իրացվելիության ռիսկը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ ցուցանիշի հաշվարկում ընդգրկված չեն բանկերի հանդիպակաց ստացումները (հաշվին կատարվող կրեդիտները) և/կամ այլ աղբյուրներից իրացվելիության համալրմանն ուղղված միջոցները:

Իրականացվել է նաև նույն ցուցանիշի մշտադիտարկում ըստ առանձին բանկերի, որի արդյունքների հիման վրա իրացվելիության ռիսկի հավանականությունը գնահատվում է նվազագույն:

Իրացվելիության ռիսկի գնահատման համար կարևոր չափանիշներ են նաև համակարգում գրանցված մերժումները և դրանց տեսակարար կշիռը համակարգով կատարվող ընդհանուր վճարումներում: Իրացվելիության անբավարարության պատճառով մերժումների քանակն ու կշիռը ընդհանուր ԷՎՀ վճարումներում շարունակում են աննշան մնալ. հաշվետու ժամանակաշրջանում ծավալի 0.2%-ը, քանակի 0.002%-ը:


ԷՎՀ-ում իրացվելիության ռիսկի և համակարգային խնդիրների առաջացման հավանականությունը չնչին է:

Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը



Աննշան են նաև իրացվելիության անբավարարության պատճառով մերժումները:

Միջին օրական վճարումների և օրվա սկզբում միջին օրական իրացվելիության համեմատական վերլուծություն (ըստ բոլոր բանկերի)



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:


---

[47] Տե՛ս 2007 թ. «Ֆինանսական կայունության հաշվետվություն» և 2010 թ. «Վճարահաշվարկային և արժեթղթերի համակարգերը Հայաստանի Հանրապետությունում» հրապարակումները:


[48] Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշի հաշվարկման հիմքում բանկերի՝ ՀՀ դրամով թղթակցային հաշիվներում օրվա սկզբում առկա իրացվելիության և հաշվով կատարված դեբետների (վճարումների) հարաբերակցությունն է: Ցուցանիշը չի ներառում բանկերի ստացումները (հանդիպակաց վճարումները), որի նպատակն է իրականացնել սթրես - թեստավորման վերլուծություն՝ գնահատելու համար օրվա ընթացքում լրացուցիչ իրացվելիություն չստանալու պայմաններում բանկերի վճարումների մերժման հավանականությունը. այն է՝ որքանով կարող են բանկերն ապահովել իրենց վճարումները միայն օրվա սկզբում առկա սեփական միջոցների հաշվին: Բանկերի կողմից իրենց հաշիվների՝ կանխիկով ամրագրումները ներառված չեն հաշվարկում: Ցուցանիշը հաշվարկվում է ըստ համակարգի (բոլոր բանկերինը՝ համախառն), և ըստ առանձին բանկերի՝ ցուցանիշները կարող են տարբերվել:

Օրվա որոշակի ժամերին առկա կուտակումները խնդիրներ չեն առաջացրել:

Միջին կիսամյակային վճարումների ծավալի ժամային բաշխումն օրվա ընթացքում



Միջին կիսամյակային վճարումների քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում



Հաշվետու ժամանակաշրջանում աճել են ժամում վճարումները, սակայն թողունակության հետ կապված ռիսկերի առաջացման հավանականությունն ընդհանուր առմամբ գնահատվում է ցածր:

Վերոնշյալ մերժումները պայմանավորված են մի քանի առանձին դեպքերով և կարող են լինել մասնակիցների կողմից իրացվելիության (վճարային հոսքերի) ոչ ճիշտ կառավարման արդյունք, ինչը չի անդրադարձել համակարգի իրացվելիության վրա:


Վճարումների ժամային բաշխվածությունը

Հաշվետու ժամանակաշրջանում պիկային ժամային միջակայքում իրականացվել է օրվա վճարումների ծավալի 28.4%-ը (ժամը 10:00-11:00), քանակի 16.8%-ը (ժամը 15:00-16:00):

Չնայած օրվա ընթացքում վճարումների քանակում ժամային բաշխման որոշակի հարթեցմանը՝ համակարգում շարունակում են առկա լինել վճարումների ծավալի 2 պիկային ժամային միջակայքեր՝ գործառնական օրվա սկզբում՝ ժամը 10:00-11:00 (ծավալի 28.4%-ը) և վերջում՝ ժամը 15:00-16:00 (ծավալի 16.1%-ը): Ուշադրության արժանի է այն, որ չնայած կիսամյակային տրենդը գրեթե չի փոխվել՝ ծավալային պիկի կտրուկ աճ է գրանցվել երկրորդ եռամսյակի ընթացքում (ժամը 10:00-11:00 ընթացքում վճարումների ծավալի 34.6%՝ առաջին եռամսյակի 22.2%-ի փոխարեն): Աճը հիմնականում պայմանավորված է Կենտրոնական բանկի հետ դրամական միջոցների ներգրավման գործիքի հետ կապված դրամական հոսքերով:

Հաշվի առնելով նշված միտումները, համակարգի թողունակության բավարար մակարդակը, իրացվելիության և հասանելիության ցուցանիշների դրական արդյունքները, ինչպես նաև մերժումների աննշան կշիռն ընդհանուր վճարումներում (տե՛ս նախորդ ենթաբաժինները)՝ 2016 թ. առաջին կիսամյակում վճարումների անհավասարաչափ բաշխումը և օրվա որոշակի ժամերին կուտակումները խնդիրներ չեն ստեղծել, և ռիսկի առաջացման հավանականությունն ընդհանուր առմամբ գնահատվում է ցածր:

Վճարում/ժամ առավելագույն քանակը՝ ըստ ամիսների



2500 և ավելի վճարում/ժամ ցուցանիշը և կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամում



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

Համակարգի թողունակությունը

2016 թ. առաջին կիսամյակում համակարգում մեկ ժամվա ընթացքում վճարումների քանակը (ըստ ամիսների՝ ժամում վճարումների առավելագույն ցուցանիշները) ընդհանուր առմամբ մնացել է նույն մակարդակի վրա, սակայն ավելացել է տարվա՝ ամենապիկային ժամում իրականացված վճարումների քանակը. առավելագույն ժամային ցուցանիշը կազմել է 5424 վճարում/ժամ (2015 թ. պիկը՝ 5419 վճարում/ժամ): Պիկային ժամը գրանցվել է մարտին, ժամը 11:00-12:00 միջակայքում՝ այդ օրվա վճարումներում կազմելով քանակի 30.2%-ը, ծավալի 22.0%-ը:

Վճարումների օրական առավելագույն ցուցանիշը մնացել է նույն մակարդակի վրա՝ կազմելով 27450 վճարում/օր (2015 թ. պիկը՝ 26245 վճարում/օր):

Որոշ չափով աճ է գրանցվել բոլոր սահմանաչափերի (ժամում վճարումների հոսքի մեծությունը բնութագրող ցուցանիշների), մասնավորապես՝ 2500-3500 վճարում/ժամ ցուցանիշի գծով:


Հաշվի առնելով, որ համակարգի գրանցած նվազագույն հնարավոր թողունակության ցուցանիշն ավելի քան 6000 վճարում/ժամ է, և վերոնշյալ սահմանաչափերին համապատասխանող դեպքերը փոքր մասնաբաժին ունեն ընդհանուր վճարային հոսքի մեջ՝ ժամում վճարումների քանակի ավելացումը որևէ բացասական ազդեցություն չի ունեցել, և թողունակության հետ կապված ռիսկերի առաջացման հավանականությունը, ընդհանուր առմամբ, գնահատվում է փոքր:

Համակարգի գործառնական հասանելիությունը

Հաշվետու ժամանակաշրջանում էլեկտրոնային վճարումների համակարգի հասանելիության վրա ազդեցություն է ունեցել միայն մեկ էական միջադեպ, որի արդյունքում հաշվետու ժամանակաշրջանում ԷՎՀ-ի գործառնական հասանելիությունը կազմել է 99.3%, ինչը բարձր ցուցանիշ է և համապատասխանում է համակարգի օպերատորի կողմից սահմանված սպասարկման մակարդակին:

Վերոնշյալ միջադեպը կապված է եղել համակարգի վերջնահաշվարկն ապահովող գործառնական օրվա բաղադրիչում առաջացած տեխնիկա-ծրագրային բնույթի խնդրի հետ: Որոշում կայացվեց վերականգնել օրվա սկզբի տվյալները և գործառնական օրը վերագործարկվեց ժամը 15:00-ին: Արդյունքում՝ գործառնական օրը փակվել էր ուշացումով, սակայն բոլոր գործառնությունները կատարվել էին տվյալ օրով, մասնակիցների մոտ խնդիրներ չէին առաջացել:

ժամում 2500, 3500 և 4300 սահմանաչափերը գերազանցող վճարումները



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

5.2. ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐ ԵՎ ԱՔՌԱ ՎԱՐԿԱՅԻՆ ԲՅՈՒՐՈ

2016 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ Վարկային ռեգիստրի տվյալների շտեմարանում առկա ընդհանուր վարկերի թիվը կազմել է 2,833,610 հատ, որից 2,673,843-ը վերաբերել է ֆիզիկական անձանց, իսկ 159,767-ը՝ իրավաբանական անձանց:


Վարկային ռեգիստրում հաշվառվող վարկերի քանակը 2016 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ

Վարկերի քանակ	Գործող	Մարված	Ընդամենը
Ըստ ֆիզիկական անձանց	635540	2038303	2673843
Ըստ իրավաբանական անձանց	16389	143378	159767
Ընդամենը	**651929**	**2181681**	**2833610**

Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ, Վարկային ռեգիստրում հաշվառվող վարկերի թիվն ավելացել է 466821-ով: Նախորդ տարվա առաջին կիսամյակի ընթացքում Վարկային ռեգիստրը տեղեկատվություն է հավաքագրել 161789 վարկերի վերաբերյալ, իսկ այս տարվա առաջին կիսամյակի ընթացքում՝ 139867:

Մինչև 2016 թ. տարեվերջ նախատեսվում է գործարկել Վարկային ռեգիստրի նոր ծրագրային համակարգը, որի ներդրման շնորհիվ Վարկային ռեգիստրին և ԱՔՌԱ վարկային բյուրոյին տրամադրվող տեղեկատվությունը բանկերը և վարկային կազմակերպությունները կարող են ներկայացնել մեկ միասնական հաշվետվական ձևաչափով, ինչը զգալիորեն կթեթևացնի վերջիններիս ծանրաբեռնվածությունը: Ծրագրային համակարգում մշակվել են ֆիզիկական և իրավաբանական անձանց նույնականացման նոր մոտեցումներ, ինչպես նաև վերանայվել է Վարկային ռեգիստր ներկայացվող տեղեկատվության սահմանափակումը, այսինքն՝ բանկերը և վարկային կազմակերպությունները տեղեկատվություն կտրամադրեն իրենց ամբողջ վարկային պորտֆելի վերաբերյալ: Կատարված փոփոխությունների արդյունքում վարկային ռեգիստրի տեղեկատվությունն արդյունավետ կօգտագործվի վերլուծական և վերահսկողական նպատակներով:

2015-2016 թթ. առաջին կիսամյակի ընթացքում տրամադրված վարկերի քանակ



Աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկ:

ԱՔՌԱ վարկային բյուրո

ԱՔՌԱ վարկային բյուրոյի տվյալների բազայում գրանցված հաճախորդների թիվը 2016 թ. առաջին կիսամյակում, 2015 թ. դեկտեմբերի համեմատ, ավելացել է 2.3%-ով և հունիսի 30-ի դրությամբ կազմել է 1553169, որոնց 98%-ը ֆիզիկական անձինք են:

Տվյալների բազայում առկա վարկերի քանակը 2016 թ. հունիսին, 2015 թ. դեկտեմբերի համեմատ, ավելացել է 6.8%-ով և հունիսի 30-ի դրությամբ կազմել է 12251107:


Վարկային բյուրոն վարկային զեկույցներ սկսել է տրամադրել 2007 թվականի ապրիլից: 2016 թ. առաջին կիսամյակում տրամադրած վարկային զեկույցները 2015 թ. նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 7.0%-ով:

2016 թվականից Վարկային բյուրոն տեղեկատվություն է ստանում Վարկային պորտֆելի արժեթղթավորման հիմնադրամից և «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊ ընկերությունից:


Բանակցություններ են վարվում նաև ՀՀ ֆինանսների նախարարության հետ՝ սահմանված ժամկետում չվճարված հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվության ստացման համար:

Վարկային բյուրոյի կողմից տնօրինվող տեղեկատվությունը պահպանելու և այլ անձանց կողմից անօրինական օգտագործումը բացառելու նպատակով մշակվել է տվյալների բազայի պահպանման բազմաստիճան կոդավորված համակարգ: Համակարգում գրանցվում են բոլոր գործողությունները, կիրառվում է համակարգի մշտադիտարկում՝ կասկածելի և չարտոնված գործողությունները բացառելու, կանխելու համար:


ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկառուների քանակը (հազար)



ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկերի քանակը (հազար)



ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված զեկույցների քանակը



5.3. ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄ

2015 թ. տարեվերջին «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքում կատարվել է փոփոխություն, համաձայն որի՝ երաշխավորված ավանդների սահմանաչափերը սահմանվել են 10 և 5 միլիոն ՀՀ դրամ՝ նախկինում գործող 4 և 2 միլիոն ՀՀ դրամի փոխարեն: Երաշխավորված ավանդների չափերի ավելացման արդյունքում երաշխավորված ավանդների գումարի զգալի աճ է գրանցվել: Այսպես. 2015 թ. երրորդ եռամսյակի վերջի համեմատ երաշխավորված ավանդներն աճել են 51.53%-ով՝ կազմելով 453510 միլիոն ՀՀ դրամ: Երաշխավորված ավանդների չափերի ավելացման արդյունքում երաշխավորված ավանդների կշիռն ընդհանուր ավանդների գումարում նախորդ եռամսյակի համեմատությամբ ավելացել է 11.8%-ով և կազմել 39.11%: 2016 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ, 2015 թ. տարեվերջի համեմատ, երաշխավորված ավանդների կշիռն ընդհանուր ավանդներում աճել է 0.51 տոկոսային կետով և կազմել 39.62%:

Ֆիզիկական անձանց երաշխավորված ավանդների ծավալը 2015 թ. վերջին եռամսյակում աճել է 5.79%-ով, երաշխավորված ավանդ ունեցող ավանդատուների քանակն աճել է 2.77%-ով: 2016 թ. առաջին կիսամյակում ընդհանուր ավանդների ծավալն աճել է 2.65%-ով, իսկ ավանդատուների թիվն աճել է 0.43%-ով և կազմել 1839292 (հաշվարկում ներառված չեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ավանդատուները):

Հաշվետու կիսամյակի ընթացքում ֆիզիկական անձանց ՀՀ դրամով և արտարժույթով ավանդների (ներառյալ չերաշխավորված ավանդները) կշիռներն ընդհանուր ավանդներում պահպանվել են գրեթե նույն համամասնությամբ, համապատասխանաբար՝ 27.28% և 72.72%:

2016 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ երաշխավորված ավանդադիրների թվում երաշխավորված ավանդի սահմանաչափը չգերազանցող ավանդ ունեցող ավանդատուների կշիռը կազմել է 98.38%: Հիմնադրամը գնահատում էր նշված ցուցանիշը նաև մինչ վերջին օրենսդրական փոփոխություններն ուժի մեջ մտնելը: Այսպես. 2015 թ. վերջի դրությամբ այդ ցուցանիշը գնահատվել է 90.29% - 99.32% միջակայքում:

Ինչպես և նախորդ տարիներին, 2016 թ. առաջին կիսամյակի վերջին ևս, ՀՀ բանկային համակարգում միայն ՀՀ դրամով ավանդ ունեցող ավանդատուները կազմել են ՀՀ բանկային համակարգի ավանդատուների գերակշիռ մասը: 2016 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ միայն ՀՀ դրամով ավանդ ունեցող ավանդատուների և միայն արտարժույթով ավանդ ունեցող ավանդատուների կշիռներն ավանդատուների ընդհանուր թվում համապատասխանաբար կազմել են 85.32% և 5.63%՝ գրեթե պահպանելով 2015 թ. վերջին արձանագրված հարաբերակցությունը:

ԱՄՓՈՓՈՒՄ

Էլեկտրոնային վճարումների համակարգի մշտադիտարկման արդյունքները վկայում են, որ վարկային և իրացվելիության ռիսկերը նվազագույնի են հասցված, համակարգի թողունակության մակարդակը բավարար է և ապահովում է օրվա ընթացքում վճարումների անընդհատությունը: Համակարգում գործառնական նշանակալի ռիսկեր չեն գրանցվել՝ համակարգի հասանելիությունը պահելով միջազգայնորեն ընդունելի մակարդակի վրա: Ընդհանուր առմամբ, ԷՎՀ-ի և ՊԱՀՀՀ-ի գործունեությունը գնահատվում է բավարար. ֆինանսական կայունության տեսակետից՝ վճարահաշվարկային ոլորտում զարգացումները կառավարելի շրջանակում են և խոցելի ռիսկեր չեն առաջացնում:

ՀՀ կենտրոնական բանկում գործող բանկային ռեգիստրում և ԱՔՌԱ վարկային բյուրոյում 2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում գրանցվել է հաշվառվող վարկերի աճ, ինչպես նաև իրականացվել են տրամադրվող տեղեկատվության միասնական հաշվետվական ձևաչափի մշակմանը և ընդհանուր գործունեության օպերատիվության բարձրացմանն ուղղված աշխատանքներ:

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Տնտեսական աճի ցուցանիշներն ըստ տարածաշրջանների 9

Գնաճը մի շարք երկրներում 9

Համաշխարհային առևտրի տարեկան տոկոսային աճը 11

Նավթի («բրենթ» տեսակի) գները 11

Պղնձի գները 11

Մոլիբդենի գները 12

Ցացահատիկի գները 12

Ոսկու գները 12

10 տարի ժամկետայնությամբ պետական պարտատոմսերի եկամտաբերությունը 14

Կենտրոնական բանկերի տոկոսադրույքների քաղաքականությունը 14

Միջբանկային տոկոսադրույքները 15

ԱՄՆ դոլարի նկատմամբ ռուսական ռուբլու և եվրոյի փոխարժեքների դինամիկան 15

Իրական ՀՆԱ-ի և տնտեսության հիմնական ճյուղերի աճը 17

ՀՆԱ ծախսային բաղադրիչները 17

Իրավաբանական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքներ 18

Պետական բյուջեի հիմնական ցուցանիշներ 18

Վճարային հաշվեկշռի հիմնական ցուցանիշներ 19

ՀՀ ներմուծումն ըստ ապրանքախմբերի 19

ՀՀ արտահանումն ըստ ապրանքախմբերի 20

Հայաստանի արտաքին առևտրի բաշխվածությունն ըստ երկրների (31.12.2015 թ. դրությամբ) 20

Միջին անվանական աշխատավարձ և գործազրկության մակարդակ 20

Ֆիզիկական անձանցից ներգրավված ավանդների տոկոսադրույքներ 21

Սպագա պայմանների ցուցանիշը և դրա բաղադրատարրերը 21

Ջուտ մասնավոր տրանսֆերտներ և սեզոնային աշխատողների վարձատրություն 21

Տնային տնտեսությունների պարտավորությունների կառուցվածքը 22

Ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի տոկոսադրույքներ 22

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների սպառողական վարկային պորտֆելի կառուցվածքը 22

Բանկերի և վարկային կազմակերպությունների հիփոթեքային և սպառողական վարկային պորտֆելը 23

Տնային տնտեսության պարտքի և եկամուտների ցուցանիշներ 23

Բնակարանների միջին գների ինդեքսը Երևանում 24

Անշարժ գույքի առուվաճառքի ինդեքսը 24

Անշարժ գույքի շուկայի վարկավորման ծավալը 25

Բանկերում շահագործումից դուրս, վաճառքի համար պահվող և գրավ համարվող անշարժ գույքի ծավալները 25

ՀՀ ԿԲ հետ և միջբանկային ռեպո գործառնությունների ամսական ծավալները և տոկոսադրույքների մակարդակները 27

ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերության կորեր 27

6 ամիս և 10 տարի ժամկետայնությամբ պարտատոմսերի սպրեդը 27

Պետական գանձապետական կարճաժամկետ պարտատոմսերի տեղաբաշխման ծավալները և միջին կշռված եկամտաբերությունները 28

Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված արժեթղթերի առուվաճառքի գործառնությունները 28

Արժեթղթերի կարգավորվող շուկայում իրականացված արժեթղթերի առուվաճառքի և ռեպո գործառնությունները ... 28

ՊՊ առուվաճառքի գործառնությունների և ՊՊ գործառնությունների ծավալ/շրջանառությունում առկա ՊՊ ծավալ հարաբերակցությունը 29
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից իրականացված ռեպո գործառնությունները 29
ՀՀ արժութային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները և փոխարժեքները 29
Փոխարժեքները ՀՀ արժութային շուկայում 30
Ֆինանսական համակարգի ակտիվների կառուցվածքն ըստ ֆինանսական հաստատությունների 31
Բանկային համակարգի կայունության քարտեզը 31
Ֆինանսական միջնորդության մակարդակը 32
4 խոշորագույն բանկերի ակտիվների, պարտավորությունների և ընդհանուր կապիտալի տեսակարար կշիռները ՀՀ բանկային համակարգում 32
Օտարերկրյա ներդրողների մասնակցությունը ՀՀ բանկային համակարգի կանոնադրական կապիտալում 32
Առևտրային բանկերի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների կառուցվածքը 33
Ըստ տնտեսության ճյուղերի վարկերում չաշխատող վարկերի տեսակարար կշռի փոփոխությունը 33
Բանկային համակարգի կողմից տնտեսությանը տրամադրված վարկերի ծավալները 33
Բանկային համակարգի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի կառուցվածքն ըստ տնտեսության ճյուղերի 34
Խոշոր փոխառուներին տրամադրված վարկային ներդրումների հարաբերությունը ընդհանուր վարկային ներդրումներին 34
Վարկերի կորուստների դինամիկ ածի դեպքում ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվը խախտող բանկերի քանակը 34
ՀՀ առևտրային բանկերի իրացվելիության նորմատիվների փաստացի և նորմատիվային մեծությունների շարժը 35
Բանկային համակարգի կարճաժամկետ ակտիվների հարաբերությունը պարտավորություններին ըստ մարմանը մնացած ժամկետայնությունների 35
Բանկային համակարգի խոշոր պարտավորությունների հարաբերությունը ընդհանուր պարտավորություններին 35
Բանկային համակարգի վարկերի ֆինանսավորման ավանդային աղբյուրների կառուցվածքը 36
Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային ավանդների արտահոսքի դեպքում իրացվելիության նորմատիվները խախտող առևտրային բանկերի քանակը 36
Բանկային համակարգի՝ արտարժույթի առուվաճառքից և վերագնահատումից ստացված զուտ եկամուտները 37
Ընդհանուր ակտիվներում շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների տեսակարար կշիռը 38
Նորմատիվային ընդհանուր կապիտալի կառուցվածքը 39
Առևտրային բանկերի ընդհանուր կապիտալի համարժեքություն 39
Բանկային համակարգի շահութաբերության ցուցանիշները 40
Բանկային համակարգի եկամուտները և ծախսերը 41
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերի մնացորդն ըստ տնտեսության ճյուղերի 41
Ապահովագրական համակարգի ակտիվների կառուցվածքը 31.12.2016 թ. դրությամբ 42
ՀՀ ապահովագրական համակարգի հիմնական բնութագրիչները 43
Ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերակցությունը Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրներում (2015 թ.) 43
Ապահովագրական համակարգի վնասաբերության և ծախսատարության ցուցանիշները 43
Ապահովագրական համակարգի կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ռիսկով կշռված ակտիվների և վճարունակության պահանջվող մեծության տեսակարար կշիռները 31.12.2016 թ. դրությամբ 44
Կենսաթոշակային ֆոնդերի ներդրումները 45
Ներդրումային ընկերությունների կապիտալի համարժեքության ցուցանիշում հաշվարկվող ակտիվների կառուցվածքը 30.06.2016 թ. դրությամբ 46
ԷՎՀ-ով վճարումների ծավալն ու քանակը՝ առանց բորսայական վճարումների 48

Սեփական միջոցների հաշվին վճարումների ապահովման միջին օրական ցուցանիշը *49*
Միջին օրական վճարումների և օրվա սկզբում միջին օրական իրացվելիության համեմատական վերլուծություն *49*
Միջին կիսամյակային վճարումների ծավալի ժամային բաշխումն օրվա ընթացքում *50*
Միջին կիսամյակային վճարումների քանակի ժամային բաշխումն օրվա ընթացքում *50*
Վճարում/ժամ առավելագույն քանակը՝ ըստ ամիսների *50*
2500 և ավելի վճարում/ժամ ցուցանիշը և կշիռը տվյալ ամսվա ընդհանուր գործառնական ժամում *50*
Ժամում 2500, 3500 և 4300 սահմանաչափերը գերազանցող վճարումները *51*
2016 թ. առաջին կիսամյակի ընթացքում տրամադրված վարկերի քանակ *51*
2015-2016 թթ. առաջին կիսամյակի ընթացքում տրամադրված վարկերի քանակ *51*
ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկառուների քանակը *52*
ԱՔՌԱ-ի տվյալների բազայում գրանցված վարկերի քանակը *52*
ԱՔՌԱ վարկային բյուրոյի կողմից տրամադրված զեկույցների քանակը *52*

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

2015-2016 թթ. համաշխարհային տնտեսական աճի գնահատման վերանայումները ԱՄՀ կողմից 9

Բնակելի շենքերի գործարկումն ըստ ֆինանսավորման աղբյուրների 25

2016 թ. առաջին կիսամյակում պետական պարտատոմսերի ինդեքսների բնութագրիչ ցուցանիշները 28

Բաժնետոմսեր թողարկողների առաջատար եռյակի և հնգյակի կենտրոնացվածությունը 2010-2016 թթ. առաջին կիսամյակներում ըստ կապիտալացման մակարդակի 29

Կենտրոնացվածության Հերֆինդալ-Հիրշմանի գործակից 32

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ 34

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենար ... 34

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենարներ 36

Հետհաշվեկշռային պայմանական պարտավորություններից բխող իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար 36

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ 37

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման սթրես-սցենարներ 38

Անշարժ գույքի գների փոփոխության սթրես-սցենարներ 39

Վարկային կազմակերպությունների ակտիվների, պարտավորությունների, կապիտալի և շահույթի մեծությունները.. 41

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ 42

Վճարունակության գնահատման սթրես-սցենար 43

Վարկային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ 44

Արտարժութային ռիսկի գնահատման սթրես-սցենարներ 44

Իրացվելիության ռիսկի գնահատման սթրես-սցենար 45

Պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի զուտ ակտիվների արժեքը 30.06.2016 թ. դրությամբ 45

Վարկային ռեգիստրում հաշվառվող վարկերի քանակը 2016 թ. առաջին կիսամյակի վերջի դրությամբ 51

ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Տնտեսական աճ	Տնտեսության կողմից որոշակի ժամանակահատվածում արտադրվող ապրանքների և ծառայությունների ծավալի աճ:
Գնաճ	Ապրանքների և ծառայությունների գների ընդհանուր մակարդակի աճ:
Սպառողական գների ինդեքս	Անփոփոխ քանակությամբ և որակական հատկանիշներով, հաստատուն սպառողական զամբյուղի շուկայական գներով զուտ արժեքի (գնի) փոփոխության ցուցանիշ, որը հաշվարկվում է ամբողջ բնակչության համար:
Վճարային հաշվեկշիռ	Վիճակագրական հաշվետվություն, որում համակարգված արտացոլվում են ամփոփ տվյալներ հաշվետու ժամանակահատվածում (եռամսյակ, տարի) այլ երկրների ու միջազգային կազմակերպությունների հետ ՀՀ (ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների միջև) արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ:
Արտաքին առևտուր	Արտահանում՝ Հայաստանի տնտեսական տարածքից ապրանքների դուրսբերում այլ երկրներ՝ ազատ շրջանառության համար, իսկ ներմուծում՝այլ երկրներից ապրանքների ներկրում Հայաստանի տնտեսական տարածք՝ ազատ շրջանառության համար:
Համախառն արտաքին պարտք	Ժամանակի ցանկացած պահին ընթացիկ և ոչնչով չպայմանավորված պարտավորությունների փաստացի չվճարված գումար, որը պահանջում է հիմնական պարտքի և (կամ) տոկոսների վճարումներ հետագայում՝ ժամանակի որևէ պահին, և իրենից ներկայացնում է ռեզիդենտների պարտավորությունները ոչ ռեզիդենտների նկատմամբ:
Վարկային ռիսկ	Ռիսկ, որ բանկի վարկառուն կամ այլ պարտապանը կխախտի բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները կամ չի գործի այդ պայմանագրի պայմաններին համապատասխան, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Իրացվելիության ռիսկ	Ռիսկ, որ բանկը ի վիճակի չի լինի ճիշտ ժամանակին բավարարելու իր պարտատերերի պահանջները՝ առանց լրացուցիչ կորուստներ կրելու, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Արտարժութային ռիսկ	Ռիսկ, որ շուկայում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Տոկոսադրույքի ռիսկ	Ռիսկ, որ շուկայում տոկոսադրույքի տատանումները բացասաբար կազդեն բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Գնային ռիսկ	Ռիսկ, որ շուկայում արժեթղթերի և բանկի հաշվեկշռում առկա նման այլ ֆինանսական գործիքների գների փոփոխությունը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա:
Ստանդարտ ակտիվ	Ակտիվ, որը սպասարկվում է պայմանագրի համաձայն և խնդրահարույց չէ:
Հսկվող ակտիվ	Ակտիվ, որը սպասարկվում է սկզբնական պայմանագրի համաձայն, սակայն ի հայտ են գալիս այնպիսի պայմաններ, որի պարագայում կարող է վտանգվել ակտիվը սպասարկելու փոխառուի բավարար ունակությունը:
Ոչ ստանդարտ ակտիվ	Ակտիվ, որի գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում՝ կապված փոխառուի ֆինանսական վատ դրության կամ պարտքը մարելու նրա անկարողության հետ:
Կասկածելի ակտիվ	Ակտիվ, որի գծով պայմանագրային պարտավորությունները չեն կատարվում, այն առավել խնդրահարույց է, ինչի պատճառով վերջինիս հավաքագրումը տվյալ պահին դառնում է չափազանց դժվար կամ անհնար:
Անհուսալի ակտիվ	Անհավաքագրելի և ամբողջությամբ արժեզրկված ակտիվ, որի՝ հաշվեկշռում որպես ակտիվ հաշվառումը այլևս նպատակահարմար չէ:
Չաշխատող ակտիվ	Ակտիվ, որը բանկի կողմից դասակարգվել է որպես հսկվող կամ ոչ ստանդարտ, կամ կասկածելի, կամ անհուսալի:
Խոշոր փոխառու	Անձ, որի գծով ռիսկը գերազանցում է բանկի ընդհանուր կապիտալի 5 տոկոսը:
Խոշոր պարտավորություն	Պարտավորություն, որը առանձին վերցրած կազմում է բանկի ընդհանուր պարտավորությունների 5 և ավելի տոկոսը՝ առանց հաշվի առնելու փոխկապվածությունը:

Ըստ ակտիվների շահութաբերություն (ROA)	Տարեկան զուտ շահույթի և տարեսկզբից միջին տարեկան ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
Ըստ կապիտալի շահութաբերություն (ROE)	Տարեկան զուտ շահույթի և տարեսկզբից միջին տարեկան ընդհանուր կապիտալի հարաբերակցության ցուցանիշ:
Ընդհանուր իրացվելիություն	Բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
Ընթացիկ իրացվելիություն	Բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների հարաբերակցության ցուցանիշ:
Նորմատիվային ընդհանուր կապիտալ	«Ֆինանսական վիճակի մասին» հաշվետվությունում արտացոլվող ընդհանուր կապիտալի և բանկային գործունեությունը կարգավորող Կանոնակարգ 2-ով նախատեսված նվազեցումների տարբերություն:
Կապիտալի համարժեքություն	Ընդհանուր նորմատիվային կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների հարաբերակցության ցուցանիշ:
Լևերիջ	Ընդհանուր ակտիվների և ընդհանուր կապիտալի հարաբերակցության ցուցանիշ:
Հետհաշվեկշռային պայմանական ակտիվ	Ակտիվ, որը հաշվառվում է բանկի հետհաշվեկշռում: Հետհաշվեկշռային պայմանական ակտիվների մեջ են ներառվում վարկային գծերի, վարկային քարտերի և օվերդրաֆտների չօգտագործված մասը, ակրեդիտիվները, տրամադրված երաշխիքները և երաշխավորությունները:
Զուտ մասհանումներ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստին կատարված հատկացումների և վերադարձների տարբերություն:
Արտարժութային զուտ դիրք	Արտարժույթով, ինչպես նաև արտարժութային ռիսկ պարունակող դրամային ակտիվների և պարտավորությունների տարբերություն:
Համախառն արտարժութային դիրք	Հաշվարկվում է որպես տարբեր արտարժույթների դիրքերի բացարձակ մեծությունների հանրագումար:
Հերֆինդալ-Հիրշմանի ինդեքս	Շուկայական մասնաբաժինների քառակուսիների հանրագումարը: Ցուցանիշը ընդունում է արժեքներ 0 – 1 միջակայքում և բնութագրում շուկայի կենտրոնացվածությունը. 0-ին մոտ արժեքները բնութագրում են կենտրոնացվածության ցածր աստիճան:
Կապիտալի տնտեսական արժեք	Ընդհանուր ակտիվների ներկա արժեքի և ընդհանուր պարտավորությունների ներկա արժեքի տարբերություն:
Սպրեդ	Վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերություն:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ԱՀՀՄՀ	Արժեթղթերի հաշվառման և հաշվարկային միասնական համակարգ
ԱՀԸ	Ազգային հիփոթեքային ընկերություն
ԱՄՀ	Արժույթի միջազգային հիմնադրամ
ԱՄՆ	Ամերիկայի Միացյալ Նահանգներ
ԱՊՀ	Անկախ պետությունների համագործակցություն
ԱՎԾ	Ազգային վիճակագրական ծառայություն
ԴՊՀ	Դաշնային պահուստային համակարգ
ԵԿԲ	Եվրոպական կենտրոնական բանկ
ԷՎՀ	էլեկտրոնային վճարումների համակարգ
ՀԱՏԵ	Համախառն ազգային տնօրինվող եկամուտ
ՀԿԴ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա
ՀՀ ԿԲ	Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ
ՀՆԱ	Համախառն ներքին արդյունք
ՆՉՊՊ	Ներկայացված, սակայն դեռևս չկարգավորված պահանջների պահուստ
ՉԱՊ	Չվաստակված ապահովագրավճարների պահուստ
ՊԱՀՀՀ	Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ
ՊԿՊ	Պետական կարճաժամկետ պարտատոմսեր
ՊՊ	Պետական պարտատոմսեր
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՍՊԸ	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՓԲԸ	Փակ բաժնետիրական ընկերություն
ՕՊԵԿ	Նավթ արտահանող երկրների կազմակերպություն (անգլերեն)
ՖՀՄՍ	Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներ

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, Երևան 0010, Վ. Սարգսյան 6. http:// www.cba.am